

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն



Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ի ՆՉՊԵՍ ԱՃԵՑՆԵԼ ՀՈՐԹԵՐԻՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ

• 1935 •

ՅԵՐԵՎԱՆ

29 JAN 2018

ԿՈՆՏՆԵՆԵՐԱՆԻ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՆԿՈՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԱՃԵՑՆԵԼ ՀՈՐԹԵՐԻՆ

(Բազարայի խաղաղաստորյան փառքի հիման վրա)

Խմբագրությանը
Պրոֆ. Յ. ՅԵՐԻՏՅԱՆԻ



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Խորհուրդների համամիութենական 7-րդ համագումարի կազմից հաստատված՝ 1935 թ. ամասնապահության զարգացման պետական միտման պլանը, վաղի մեջ մատչեցների պահպանումն ու անցումը կազմում է ճիմնական յեվ վնասական խնդիրներից մեկը, պահանջում է 1935 թվի ընթացքում, նույն թվի ծնված մատչեցներից պահպանել յեվ անեցնել 2 միլիոն 55 հազար գլուխ մեղուկ (բուսակ), 11 միլիոն 401 հազար գլուխ հորթ, 14 միլիոն 770 գլուխ գոմի յեվ 16 միլիոն 634 հազար գլուխ գառ յեվ ուլ: 1934 թվի ընթացքում աճեցրած մատղաշների հետ համեմատած՝ 1935 թվի պլանը նախատեսում է հետևյալ տոկոսային աճը. մորուկների նկատմամբ՝ 90%, հորթերի նկատմամբ՝ 33,5%, գոմիների նկատմամբ՝ 39%, և գառների նկատմամբ՝ 21,4%: Այս խոշորագույն և միաժամանակ միանգամայն բեալ պլանի կատարումը հանդիսանում է՝ անասնապահության ընդարձակում պայքարող ամեն մի աշխատողի պատվի, փառքի, արիության և հերոսության գործը: Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համագումարի կողմից ընդունված՝ կոլտնտեսային ստալինյան նոր կանոնադրությունը լիակատար պայմաններ է ստեղծում այդ հաղթանակի համար: Գործի վերջնական հաղթանակն ապահովելու յեն կենդանի մարդիկ, վորի համար նրանք պետք է տիրապետեն անասնաբուծության բարդ տեխնիկային—ստալինյան եպոխայի տեխնիկային—ողտազործելով առաջավոր խորհրտնտեսությունների, կոլտնտեսությունների դրական փորձը և զոտտեխնիկական գիտություն նվաճումները:

Այս գիրքը հենց այդ նպատակն է հետապնդում, վորի նյութի զգալի մասը կազմում է Բազարչայի անասնապահական խորհրտնտեսության մոտ յերկու տարվա (1933,34 և մասամբ 35 թվականների) մատղաշների պահպանման և աճեցման ընդարձակում ձեռք բերված փորձի ամփոփումը: Այդ աշխատանքին ան-



11-249449

միջապես մասնակցել ե գրքույկի հեղինակը, վերապես տնտեսութ-
յան ավագ մասնագետ: Գրքույկում առաջարկված ձևերի ոգ-
տավետության լավագույն ապացույցն այն է, վոր, շնորհիվ այդ
ձևերի կիրառման, խորհրտնտեսութունը մատղաշների պահպան-
ման գործում հասել ե միանգամայն գրական արդյունքների՝
նվազագույն չափի հասցնելով անկումները և վիժումները տոկոսը՝

Հեղինակ

1. ԱՌՈՂՋ ՀՈՐԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նորմալ և առողջ հորթ ստանալու համար պետք ե մտածել
դեռ մինչ նրա աշխարհ գալը. հորթը խնամքի առարկա պիտի
հանդիսանա դեռ մոր արգանդում գտնվելու ժամանակից: Գիտ-
նական-մասնագետ Տրոուբերժի հետազոտությունները պարզեցին,
վոր խոշոր ցեղերի կովերի հղիության 185-րդ օրը, կամ ծնելուց
100 օր առաջ, պտղի մարմնի նյութը կազմում ե 896,8 գրամ,
այն ժամանակ, երբ ծնվելու մոմենտին միջին քաշը լինում ե 29,6
կիլոգրամ, և չոր նյութը կազմում ե 7,63 կիլոգրամ, կամ մոտ
8 և կես անգամ ավելի՝ համեմատած հղիության 185-րդ օրում
ունեցած քաշի հետ:

Գիտական այս կարևոր տվյալին ծանոթանալուց հետո, ախ-
նահայտ ե դառնում հղի կովի լավ կերակրման և հատուկ խնամքի
անհրաժեշտությունը, մասնավորապես հղիության 6—7-րդ ամիս-
ներից սկսած: Պտղի մարմնի չոր նյութերը բաղկացած են այն
աննգարար նյութերից, վորոնցով սնվում ե կովը: Նույն Տրոուբերժի
տվյալներով՝ նորածին հորթի մարմնին ունի հետևյալ բաղա-
դրությունը (տախտաներով), ջուր՝ 73,58, չոր նյութեր՝ 26,42, վորի
մեջ սպիտակուցը կազմում ե 17,77, ճարպ՝ 3,54, մոխրը՝ 4,39:
Հետևաբար, լավ հորթ ստանալու համար հղի կովին, հղիության
վերջին 100 օրվա ընթացքում, բացի կենսապահ և արդյունավետ
կերից (ածի և կաթի համար), պետք ե տալ նաև լրացուցիչ կեր՝
պտղի նորմալ զարգացման համար: Կերը պետք ե պարունակի
անհրաժեշտ քանակությամբ սպիտակուց, հանքային նյութեր և
վիտամիններ: Լրացուցիչ կերի քանակը պտղի զարգացման համար
տեղական միջին մեծության կովերի համար՝ ըստ պրոֆ. Պոպովի
նորմաների, կարելի յե ընդունել որական մոտ 0,40 կգ սկան-
դինավյան կերային միավոր, վորը հավասար ե մոտ 1 կգ լավ
խոտի, կամ մոտ 500 գրամ ցորենի թեփի, կամ մոտ 350 գրամ քառապի:

Բազարչայի խորհրդային տնտեսությունում լրացուցիչ կեր մենք տալիս ենք հետևյալ կարգով. հղիության վերջին 100 որում տըրվում է ընդամենը 160 կգ խոտ և 12 կգ աղացած դարի կամ ճրտասպի: Թե վերջանով կարող են այդ նորմաներն ապահովել պտղի նորմալ զարգացումը մոր արգանդում, ցույց է տալիս հետևյալ հաշվարկումը. 160 կգ խոտը պարունակում է 4,8 կգ սպիտակուց (1 կգ լեռնային խոտը պարունակում է առնվազն 30 գրամ սպիտակուց), 12 կգ աղացած դարին պարունակում է 720 գրամ սպիտակուց (1 կգ դարու ալյուրը պարունակում է առնվազն 60 գրամ սպիտակուց): Ընդամենը կովն ստանում է 5,52 կգ սպիտակուց: Այդ սպիտակուցից պտղի մարմնում կուտակվում է մոտ 70%: հետևաբար՝ տրված 5,52 կգ-ից պտղի մարմնի կառուցման համար կծախսվի $\frac{5,52 \cdot 70}{100} = 3,864$ կգ սպիտակուց: Ծնվելու մո-

մենտին մեր տնտեսության հորթերն ունենում են 18-23 կգ կենդանի քաշ, վորոնց մարմնում սպիտակուցը կազմում է միջին թվով՝ $\frac{22 \cdot 17,77}{100} = 3,9$ կգ, հետևաբար պահանջն ապահովում է

լիովին: Ի հարկե՝ խորհրդային տնտեսությունը չի հանդիսանում փորձակայան և այս մանրակրկիտ հաշվարկումները յուրաքանչյուր անասունի նկատմամբ չեն կատարվում, սակայն այդ հաշվարկումների ըմբռնումը և հասկանալը հնարավորություն է տալիս ապահովելու հղի կովերի ճիշտ կերակրումը և նորմալ հորթեր ստանալը:

Հանքային նյութերի դրական բաղան ապահովելու համար բավական է, վոր կովը կերային ազդեցության մեջ ստանա, վորպիս կռպիտ կեր, լավորակ մարգագետնային կամ ցանովի խոտ՝ որական 7 կիլոգրամ՝ 300 կգ միջին քաշ ունեցող կովի համար: Բացի այդ, կովին պետք է տալ աղացած կավիճ կամ վոսկրի ալյուր՝ յուրաքանչյուրից որական 30-35 գրամ. աղ պետք է տալ որական 35 գրամ, կամ կոշտ աղ, վոր կոշն իր ցանկությունը լիզի:

Հանքային նյութերով անբավարար սնվելու դեպքում հորթերը ծնվում են թույլ կազմվածքով, փխրացած վոսկրով և զրկվարին հիվանդության դեպքում շուտ սատկում են: Պտղի նորմալ զարգացման համար կարևոր նշանակություն ունեն նաև այլպես կոչվող վիտամինները, վորոնցից A և D խումբն առանձ-

նապես անհրաժեշտ է առողջ անասունների համար. հիշված վիտամինները չլինելու դեպքում առաջ է գալիս կենդանիների աճի խանգարում, կենդանիները մնում են վտիտ, թերադարձացած, ստանում են վոսկրային հիվանդություն (A-ի բացակայության դեպքում), պակասում է դիմացկունությունը (A-ի պակասության դեպքում): Վիտամին A և D լինում են կանաչ խոտի մեջ, մեծ հետեանքով: Վիտամին A և D լինում են առվույտի և յերեքնուկի մեջ, քանակությամբ գտնվում են կանաչ առվույտի և յերեքնուկի մեջ, բավարար քանակությամբ յերեքնուկի սիլոսի մեջ և զաղարի մեջ: Բազարչայի սնեսսուրյունում հղի կովերն ստանում են կերամեջ: Բազարչայի սնեսսուրյունում հղի կովերն ստանում են կերամեջ, յին ուացիոն՝ լավորակ մարգագետնային խոտ, գառու յեվ ցորենի քեփ, սիլոս, վիկի հաղդ, բուսպ, վոր հիմնականում ապահովում է քե՝ սպիտակուցի, քե՝ հանքային տղերի յնվ քե՝ հիշված վիտամինների պահանջը:

2. ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ԾՆԻ ԺԱՄԿԵՏԻ ԿԱՆՈՆԱԿՑՐՈՒՄԸ

Բեղմնավորման և ծնի ընթացքը 1934 թվին Բազարչայի խորհրդային տնտեսությունում կատարվել է № 1 աղյուսակի մեջ բերած կարգով:

Բեղմնավորման յեվ ծնի ընթացքը Բազարչայի խորհրդային տնտեսությունում 1933-34 թ. Բ.

Բեղմնավորումը 1934 թ. ընթացքում				Ծնի ընթացքում			
Ամիսներ	Պլանը	Կատարման 0/0-ը տարվա պլանի նկատմամբ	Կատարման 0/0-ը տարվա պլանի նկատմամբ	Ամիսներ	Պլանը	Կատարման 0/0-ը տարվա պլանի նկատմամբ	Կատարման 0/0-ը տարվա պլանի նկատմամբ
Հունվար	32	4	0,8	Հունվար	22	16	3,2
Փետրվար	26	5	0,9	Փետրվար	54	40	8,2
Մարտ	21	7	1,1	Մարտ	63	117	24,0
Ապրիլ	27	45	7,6	Ապրիլ	96	118	24,2
Մայիս	60	85	14,6	Մայիս	88	54	11,1
Հունիս	83	105	17,7	Հունիս	46	28	5,7
Հուլիս	79	136	22,9	Հուլիս	29	23	4,7
Օգոստոս	52	90	15,3	Օգոստոս	12	14	2,8
Սեպտեմբեր	61	40	6,6	Սեպտեմբեր	8	4	0,8
Հոկտեմբեր	50	12	2,0	Հոկտեմբեր	17	11	2,2
Նոյեմբեր	46	—	—	Նոյեմբեր	18	20	4,1
Դեկտեմբեր	53	36	6,1	Դեկտեմբեր	33	28	—
Ընդամենը	590	565	95,6		486	473	98

Այս աղյուսակից յերևում է, Վոր պլանը նպատակ ունի կո-
վերի գլխավոր ծինը գարնան ամիսներից փոխադրել ձմռան վեր-
ջին ամիսներին: Մի յերկու տարում այդ փոխադրումն, իհարկե,
անհնարին է լիովին անցկացնել, դրա համար հարկավոր է ավելի
յերկար ժամանակ:

1934 թվի հունվար—ապրիլ ամիսների ծինը 1935 թվի
նույն ամիսների ծին հետ համեմատելիս տեսնում ենք, Վոր
1935 թ. ձմռան (հունվար—փետրվար) ամիսներին ավելի շատ
ծին է ընկնում (տես աղ. № 2):

	Աղյուսակ № 2			
	1934 թ.		1935 թ.	
		%		%
Հունվար	16	19,6	65	39,54
Փետրվար	40		56	
Մարտ	117		103	
Ապրիլ	118		82	
Ընդամենը	291		306	

Այդ յերկու ամիսներին ծինը 1934 թ. կազմել է 19,6%, իսկ
1935 թ.՝ 39,54%:

Ի՞նչ նպատակով է Բաղարշյաի խորհրդային տնտեսու-
թյունը վաղ ծնին գիծում:

ա) արոտային շրջանը տնտեսութան մեջ սկսվում է մայի-
սի առաջին կիսից: Կովերի բնիմալորման ամենայնուհետև շրջանը
գուգադիպելով արոտային շրջանին, յերբ նրանք իրենց զգում են
ընական լավագույն պայմաններում—առողջ, թարմ ոգ և զբո-
սանք, հիանալի սնունդ արոտում, գեր վիճակ—ապահովվում է
բեր գալու տոկոսի բարձրացումը և, Վոր ամենակարևորն է, դրա
հետևանքով բեղմնավորման եֆեկտը հասնում է առավելագույն
չափի:

բ) հունվար, փետրվար և մարտ ամիսները հանդիսանում
են մսուրային շրջանի յերկրորդ կեսը կազմող ամիսները, յերբ
աշխատանքներն ընթանում են նորմալ կարգով և կատարված են
մասսայական ծնին դիմավորելու բոլոր նախապատրաստական
աշխատանքները:

գ) ծինն ընդունվում է մթնոլորտային կայուն պայման-
ներում, յերբ տեղի չունեն ոգի ջերմաստիճանի մեծ տատա-
նումներ:

դ) մսուրային շրջանը հանդիսանալով անասնապահական
գոտեխնիկական աշխատանքների տեսակետից ավելի կազմա-
կերպված և կայուն շրջան՝ բոլոր դեկավար, մասնագիտական և
բանվորական սպասարկող կադրերի ուղադրությունը կենտրոնաց-
ված է լինում դեպի այդ աշխատանքները և այն կատարվում է
մեծ հաջողությամբ:

ե) հունվար, փետրվար և մարտ ամիսներում ծնված հոր-
թերն արոտի շրջանն սկսվելու մոմենտին արդեն պահանջված
հասակն ու ամրակազմությունն ունեն. արոտի դուրս գալու և
արոտի սկզբնական շրջանում դրանց համար կլիմայական տաա-
նումներն այնքան վտանգավոր չեն լինում (համեմատաբար), հե-
տևաբար իրենց աճման ամենալավ շրջանում հորթերն ոգտադոր-
ծում են արոտի անփոխարինելի կերը, Վորն ունի հսկայական
նշանակութուն ինչպես մատղաշների զարգացման տեսակետից,
այնպես և տնտեսական տեսակետից՝ իջեցնելով նրանց պահպան-
ման—աճեցման ինքնարժեքը:

զ) արոտում մեծահասակ մատղաշները (4 ամսականից բարձր),
կանաչ կերով աճեցնելիս, լրացուցիչ կիրակրման գրեթե կարիք
չեն ունենում և կանաչ խոտից նրանք ստանում են այն բոլոր
աննդարար նյութերը (մասնավորապես սպիտակուցը, հանքային
աղերը և վիտամինները), Վորոնք անհրաժեշտ են:

ե) հունվար—մարտ ամիսներում ծնված հորթերը լրիվ կեր-
պով ոգտադործում են արոտը՝ կենդանիների զարգացման համար
այդ լավագույն կերը, իսկ ավելի ուշ ծնվածները կամ մասամբ, կամ
ամբողջովին զրկվում են այդ մեծ առավելությունից: Ուշ ծնված
հորթերը համեմատաբար նվազ են մնում և աշխատ-ձմեռային
ցրտերն սկսվելու ժամանակ չեն ունենում անհրաժեշտ գիրու-
թյունն ու ամուր կազմը, ձմռան ցրտերին չեն դիմանում և ավելի
շատ են յենթակա լինում զանազան հիվանդությունների:

Վերջապես վաղ ծնի առավելությունները մեկնել հանդիսա-
նում է այն, Վոր կովերը մսուրային շրջանում ծնելիս տալիս են
բարձր կիթ և դուրս գալով արոտի՝ կանաչ խոտի շնորհիվ՝ բարձր

են պահում իրենց կաթնատուլութունը և այգախոսող իրենց ամբողջ լակտացիայի ընթացքում ավելի շատ կաթ են տալիս *):

Մերձքաղաքային ֆերմաներում, վորոնց խնդիրն է մաքուր կաթ մատակարարել աշխատավորությանը, չեն կարող կոճերի ծինը հարմարեցնել վորոշ սեզոնի, այդ տնտեսություններում ծինը պետք է հավասար չափով տեղի ունենա բոլոր ամիսներում:

Վազ ծնի առավելությունների մասին վկայում են և Բազար-չայի խորհանտեսության հորթերի աճը (տես աղյուսակ № 3): Այդ աղյուսակից պարզ յերևում է, վոր շուտ ծնված հորթերը տալիս են ավելի բարձր միջին աճ, քան ուշ ծնվածները **):

Աղյուսակ № 3

Տարբեր ամիսներում ծնված հորթերի անը 1934 թ. բնթացում՝ սկսած ծնվելու օրից մինչև տարվա վերջը՝ Բազարչայի խորհանտեսությունում:

Վոր ամսում են ծնվել	Մեկ հորթի կենդանի քաշը ծնվելու ժամանակ (միջինը) կգ	Ծնված և կենդանի մնացած հորթերի բանակը	Մեկ հորթի որակաժին միջին աճը (գրամներով)
Դեկտեմբեր	23,0	19	405
Հունվար	22,5	16	418
Փետրվար	23,0	25	408
Մարտ	22,0	103	402
Ապրիլ	22,0	114	385
Մայիս	20,5	54	305
Հունիս	19,0	43	265**
Հուլիս	19,0	17	260
Օգոստոս	18,0	8	250
Սեպտեմբեր	20,0	9	268
Հոկտեմբեր	20,5	31	308

*) Լեդինակի դաստիարակությունները վաղ ծնի առավելությունների մասին հորթերի զարգացման և աճման նկատմամբ ձիշտ են, մանավաճ բարձր լեռնային շրջանների համար: Այդ հաստատվում է շվեյցարական և գերմանական ալպերի ավյալներով (տես Շեպան-Ալպյան տնտեսությունների հայերեն թարգմ.), այլև մեզ մոտ՝ Արմֆ. Ս. Յերկյանի և նրա աշխատակիցների կողմից Ուզբեկստանի և Գերմանիայի հատարած գետնաբանական հետազոտություններով: Ընդհանուր առմամբ, վոր վերաբերում են կոճերի տարեկան կթի բարձրացմանը, վոր առաջ և պալիս վաղ ծնի հետևանքով: Սակայն վաղ ծնի հարցը դեռ լուսաբանվելու կարիք ունի, մանավաճ շվեյցարական պանրագործության պահանջների տեսակետից: Այդ շրջաններում այնպես պետք է կազմակերպել ծնի ժամկետները, վոր ամառվա կաթն գլխի պահպանվել: Մամոք. խմբ.

**) Մայիս ամսից ուշ ծնվածները անբավարար աճի վրա հավանորեն ազ-

Տեսնենք այժմ, թե ինչպես է դասավորվում հորթերի անկուսն ըստ ծննդյան ամիսների և հասակի: Այս պարզ յերևում է № 4 աղյուսակից:

Աղյուսակ № 4

Մասնակի ալիք	Միջին փանակը	Վոր ամսին են ծնված	Ըստ հասակի				Ըստ հիվանդությունների				Զույգ լուսնային	Զույգ փանակ	Զույգ փանակ
			Մինչև 15 օրական	Մինչև 1 ամսական	Մինչև 2 ամսական	2 ամսականից բարձր	Սպիտակ փորված	Գարատի փ	Դիժվանքի	Սկզբնական, սեզոնային	Հասարակ փորված	Զույգ լուսնային	Զույգ փանակ
Հունվար	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Փետրվար	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Մարտ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ապրիլ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Մայիս	1	Մայիս	—	1	—	—	—	—	—	—	1	—	—
Հունիս	2	Հունիս	1	1	—	—	—	—	—	—	1	1	—
Հուլիս	3	Հուլիս	—	1	2	—	—	—	—	—	1	2	—
Օգոստոս	5	Հուլիս-սեպտեմբեր	2	2	1	—	—	—	—	—	3	2	1
Սեպտեմբեր	3	Օգոստոս	—	1	2	—	—	—	—	—	1	1	—
Հոկտեմբեր	1	Սեպտեմբեր	—	—	1	—	—	—	—	—	—	1	—
Նոյեմբեր	4	Սեպտեմբեր-հոկտեմբեր	—	3	1	—	—	—	—	—	1	1	2
Դեկտեմբեր	3	Հոկտեմբեր-նոյեմբեր	—	1	2	—	—	—	—	—	1	2	—
Ընդամենը	22		3	10	9						1	9	11

Մտերային շրջանում ծնված հորթերն անհամեմատ դիմացկուն են և այդ ժամանակամիջոցում՝ հունվարից մինչև հունիս

դեցյալներն և ունեցել և այդ ժամանակամիջոցում հորթերի ծծած կաթի բանակն անբավարար լինելը, արտաի վրա հույս դնելով շատ անգամ կթողները շատ քիչ կաթ են թողնում պտուկներում:

Մամոք. խմբ.

ամիսը՝ ծնված 300 հորթից սատկել և միայն մեկ զլուխ: Յերկ-
բորդ յեղրակացությունը, վոր պիտի հանել այս աղյուսակից, դա
այն է, վոր մատղաշները սատկել են միայն թոքերի բորբոքու-
մից և հասարակ փորլուծից և այդ հիվանդություններին յենթարկ-
վել են բացառապես ավելի ուշ՝ մայիսից հետո ծնված մատղաշ-
ները: Ըստ սեւի՝ անկումները գրեթե հավասար են:

ՄՆԵԴԱՐԱՆԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոլտնտեսային և խորհրտնտեսությունների ֆերմաներում
նորմալ և առողջ հորթ ստանալու հետևյալ նախապայմանը դա
ծննդարանի կազմակերպումն է:

Ռուսական մասնագիտական գրականության մեջ առաջարկ-
վում է հղի կովը ծննդարան փոխադրել ծնելուց միայն 5—7 օր
առաջ*): Այդ առաջարկը բոլորովին չի համապատասխանում մեր
պայմաններին, յեթե նկատի ունենանք, վոր խորհրտնտեսություն-
ների և կոլտնտեսությունների անասունների 80—90% գոմեքում
ջրվելու հարմարություններ չունի, նրանք ձմեռը ջրվում են
դրսում՝ լավադուշն դեպքում՝ աղբյուրների ջրերով, իսկ վատ
դեպքում՝ առվի ջրով: Բացի այդ, յեղած գոմերի զգալի մասը դեռ
չի կահավորված և պատրաստված զոոտեխնիկայի և առողջապա-
հական պահանջների համաձայն (հատակների վատ վերակը, խո-
նավությունը, ողափոխության բացակայությունը, վոչ բավարար
լույսը, վոչ բավարար ջերմությունը և այլն): Յեւ յեթե ծանրած
կովը մինչև հղիության վերջին 5—7 օրը թողնվի այդ պայման-
ներում և ջրվի դրսում, վոր դժբախտաբար տեղի յե ունենում
մեր շատ կոլտնտեսություններում և խորհրտնտեսություններում,
ապա անսպասելի չեն լինի և՛ վիժումները մասսայական դեպքերը,
վոր տեղի յեն ունենում հաճախ: Ձմռանը կովը ծննդարան պետք
է փոխադրել ծնելուց 15—20 օր առաջ և մինչև ծննդարան փո-
խադրելը մեկ ամիս առաջ պետք է պարտադիր կերպով ջրել
ներսում՝ սառը ջուր չտալու նպատակով:

*) Տե՛ս С. В. Серанин, В. П. Устьянов и др. — «выращивание молодняка
крупного рогатого скота», գիրքը, 1934 թ.

Յեթե յուրաքանչյուր ֆերման ունենա 20—23 կով և 15 հորթ
տեղավորող ծննդարան, նա կապահովի 250—300 կովի ծնունդ:
Իսկ այդ ելեմենտար հնարավորությունն ունի, անտարակույս,
մեր կոլտնտեսությունների ու խորհրտնտեսությունների մեծ մասը:

Ծննդարանի համար պետք է ընտրել այն գոմը կամ նրա
մի մասը, վոր պաշտպանված է քամիներից, ունի չոր հիմք և
հատակ: Հատակը պետք է շինված լինի հաստ ալախտակից կամ
ասֆալտից, ծայրահեղ դեպքում՝ լավորակ հարթ սալերից: Ան-
թույլատրելի յե ծննդարանի հատակը պատրաստել կավից կամ
կլոր քարերից, իսկ ցեմենտից կարելի յե պատրաստել, յեթե կո-
վերի տակը հաստ ցամքար փովի: Պատերը և տանիքը հաստ
շերտով պետք է սվաղել ներսից ու դրսից, իսկ ներսի կողմից
նաե սպիտակեցնել կրով:

Նպատակահարմար է խոտից կամ ծղոտից գործել այսպես
կոչված կրկնակի փեղկեր՝ ցուրտ գիշերները պատուհանները
դրսի կողմից ծածկելու և գոմը տաք պահելու համար: Ծննդա-
րանը պետք է ունենա նաե ողափոխության խողովակների՝ ողը
միշտ մաքուր պահելու համար:

Ծննդարանի ներսում—հարավային պատի մոտ տախտակով
պետք է կտրել և պատրաստել հորթանոց՝ նորածին հորթերի
համար (10—12 հորթի համար), մոտ 6 մետր յերկարությամբ և
4 մետր լայնությամբ՝ առանց բաժանմունքների բաժանիկու:
Ծննդարանում պետք է ունենալ նաե 5—6 հատ հորթերի ան-
հատական արկղ: Բացի այդ, ծննդարանում պետք է ունենալ
հատուկ սավաններ՝ նորածին հորթերն ընդունելու, ինչպես և
սրբիչներ, խալաթներ և դեղորայքի արկղ՝ ախտահանման և
առաջին ոգնության համար:

III. ՀՈՐԹԻ ՄՆԵԴԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մեր տնտեսության մեջ ծնի նախապատրաստումը և ըն-
դունումը կատարվում է հետևյալ կարգով. ըստ բեղմնավորման
մատյանի տվյալների և հղիության օրացույցի՝ զոովնապեքու-
նայի միջոցով հայտարարվում ու առանձնացվում են այն կովերը,
վորոնք գտնվում են հղիության վերջին 45—50 օրում: Դրանք
կապվում են առանձին շարքում և նրանց նկատմամբ հատուկ

խնամք ե տարվում: Ծննդաբերությունից 20 որ առաջ կովը փոխադրվում ե ծննդարան և հանձնվում ե ծննդարանի բրիգադիբին: Կովերը ջրվում են ներսում՝ 15—16⁰Ց-ի ջերմություն ունեցող ջրով: Մաքրվում ե կաշին, կուրծը: Ծննդարանում մետաղե քորիչներով քորելն արգելվում ե, վորովհետև նկատվել են դեպքեր, յերբ դաշավով քորելիս կովը վիժել ե: Ծննդաբերական ցավերն սկսելու մոմենտին կրիտիկնի, լիզոլի կամ այլ ախտահանիչ լուծույթով՝ ախտահանվում են ծննդկանի սեռական որդանները, հատակը, շրջապատը: Նորածին հորթն ընդունվում ե մաքուր բրեզենտե սավանի վրա, չորացվում ե մարմինը, մաքրվում ե բերանի և քթի խոռոչի լորձունքն ու փոխադրվում ե անհատական արկղի մեջ, վորը նույնպես նախորոք ախտահանվում ե: Արկղի հատակին փռում են չոր, մաքուր ծղոտ: Կովը պառկած տեղից կանգնեցնում ե մաքրում են: Այնուհետև ախտահանվում ե չորացվում ե հատակը, վորի վրա փռում են հաստ շերտով ծղոտի ցամքար: Առաջին որերը կովին տրվում ե գոլ ջուր, լավորակ խոտ, իսկ կարիք յեղած դեպքում՝ ալյուրի շփոթ:

IV. ՆՈՐԹՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՐԿՂՈՒՄ (Նվերսի արկղը)

Անհատական արկղում հորթը պահվում ե 5—6 որ, վորից հետո, յերբ նա անհրաժեշտ չափով ամրանում ե, իջեցվում ե ծննդարանի մեջ պատրաստած հորթանոց-պրոֆիլակտորիան՝ ավելի ազատ շարժումներ կատարելու, մկաններն ամրացնելու և ախորժակը զարգացնելու համար: Այդ հորթանոցում գտնվում են 10—12 մատղաշի հետ միասին: Մեկուսացրած վիճակում՝ անհատական արկղներում՝ յերկար ժամանակ պահելուց խուսափում ենք, վորովհետև մեր դիտողությունները ցույց են տվել, վոր այդ դեպքում հորթերը թույլ են լինում, ուշ են զարգանում և ամբողջում ե լավ ախորժակ չեն ունենում: Անհատական արկղներում յերկար ժամանակ պահելու առավելությունը բացատրում են հիվանդությունների կանխումով—պրոֆիլակտիկայի ավելի դյուրին կիրառումով, իսկ աշխատանքի լավ կազմակերպման դեպքում պրոֆիլակտիկան նույն հաջողությամբ կիրառվում ե նաև ընդհանուր հորթանոցում—պրոֆիլակտորիայում: *)

*) Հեղինակը ճիշտ ե նկատում, վոր աշխատանքի լավ կազմակերպման

14—15⁰ որից հետո, յեթե հորթը կազդուրված ե նորմալ վիճակում ե, կովի հետ միասին հանձնվում ե այն մշտական բրիգադին, վորտեղից նա բերված ե ծննդարան:

V. ԾՆՆԴԱՐԱՆԻ ՆԱԾԱՎԱՌՈՒՄԸ

Ծննդարանում հաշվառմանի համար պահում են հետևյալ մատյանները:

ա) կովերի ընդունման և հանձնման մատյան.

բ) ծննդաբերության հաշվառման մատյան (հորթի սկզբնական քաշը, սեռը, ցեղը, դույնը, ձեւը, մոր ձեւը, վոր բրիգադից ե բերված ե այն):

գ) դիտողությունների մատյան, վորտեղ ղեկավար ե մասնագետ աշխատողները գրում են իրենց դիտողությունները՝ թե՛ հորթանոցների և դրական աշխատանքների մասին, վորը մեծ ոգնություն ե ցույց տալիս ծննդարան սպասարկող բանվորներին:

Բազարչայի խորհատեսության որինակով ե ոգնությամբ ծննդարաններ կազմակերպեցին հարևան Բաբխովկայի ու Բազարչայի կոլտնտեսությունների ապրանքային ֆերմանները:

VI. ԾՆՆԴԱՐԱՆԻ ՏՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծննդարանի կազմակերպումը 1933 թ. դեկտեմբեր ամսից հնարավորություն տվեց մեզ վոչ միայն հաջող կերպով աճեցնել և պահպանել մատղաշները, այլև առավելագույն չափով կրճատել անհաջող ծնունդը—վիժումները:

Այս յերեվում ե հետեւյալ աղյուսակից.

դեպքում, նույն հաջողությամբ կարելի յե հիվանդությունների առաջն առնել առանց այդ արկղի կիրառման: Եվերսի արկղը հորթին չի փրկում հիվանդություններից, բանի վոր փորձը ցույց ե տվել, վոր այդ արկղում պահած հորթերն ել պակաս քանակությամբ չեն հիվանդանում: Մյուս կողմից՝ արկղի բացասական կողմն ել պարզ յերևում ե հեղինակի բացատրությունից: Բացի այդ, արկղի վրա հույս դնելով հաճախ աչքաթող են արվում մատղաշների խնամքի կարևորագույն մոմենտները և դրանով՝ նպաստում հիվանդության առաջ դալուն: Ուշադրություն դիտարարպես չի ուղղվում այն կողմ, ուր հարկն ե:

Այս ամենը նկատի առնելով, կարծում ենք՝ ժամանակն ե Եվերսի արկղի նպատակահարմար լինելու խնդիրը վերանայել:

Ծանոթ. խմբ.

Ա. Գ. Դ. Ե. Զ.

Կոմիտեի վիճակագրության ծախսերի մասին հաշվետվություն
 1933 թ. 1934 թ. Բազմաթիվ խորհրդակցություն

Միջին ծննդաբանական (1933)

Ծննդի ընդհան- րական	Վիճակ- ների քանակ	%	Մտացված հորթերի քանակ	Մատակա- ների քանակ	%
453	229	50	224	47	21

Ծննդաբանական (1934)

Ծննդի ընդհան- րական	Վիճակ- ների քանակ	%	Մտացված հորթերի քանակ	Մատակա- ների քանակ	%	Վիճակների- մատակա- նության 1933թ. հետ 1934թ. հետ
473	27	5,77	446	24	5,0%	835% 420%

Մեկնաբանություններն ավելորդ են, այս թվերը պերճա-
 խոս կերպով հաստատում են ծննդաբանի հսկայական դերն
 անասնապահական ֆերմայում:*)

3. Հորթերի ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

ԽՄԵՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԾԾԵՑՆԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

Ինչպես հայտնի չէ, հորթերին կաթով կերակրում են կամ
 կաթ խմեցնելու, կամ ծծեցնելու միջոցով. մեզ մոտ առաջին յերկ-
 րորդ ձևն է տիրապետողը:

Սակայն հորթերն ամենակուլտուրական, նպա-
 տակահարմար ձևն անշատ կերակրելու մեթոդն է, այսպես կոչ-
 ված՝ խմեցնելու ձևը: Այս ձևը պետք է առաջիկա մեկ-յերկու

Իհարկե՝ այնպիսի տպավորություն չպիտի ստացվի, վոր այդ հաջո-
 դությունները պարտական են միայն ծննդաբանի սոսկ գոյությունը: Անշուշտ՝
 այստեղ տեղի չէ ունեցել խոշոր բեկում՝ միաժամանակ խնամքի, կերակրման
 ու պրոֆիլակտիկ պայմանների մեջ ելլ:

Ծանոթ լսմ.

տարվա ընթացքում իր կիրառումը դառնի նաև Հայաստանում,
 իհարկե՝ վոր մեխանիկորեն, այլ գոտեխնիկական հետադարձ,
 ժրջան աշխատանքի ծավալման միջոցով, անասնապահական
 ֆերմաններում անհրաժեշտ գոտեխնիկական - սանիտարական
 պայմաններ ստեղծելու հիման վրա:

Հորթը կովից անշատին այնքան էլ բարդ գործ չէ, ինչպես
 ցանկանում են պնդել հետաձուլության տուրք տվող պրակտիկ
 անասնաբույժները, կամ՝ անգամ առանձին գոտեխնիկները:

Հորթն առանց կովի կերակրելու մեթոդին թերահավատո-
 րեն մոտեցողները սովորաբար 3 պատճառաբանություն ունեն.

1. վոր իբր թե մեր տեղական ցեղի կովերն առանց հորթի ծծե-
 լու կաթ չեն տալիս, 2. վոր հորթն ամանից կաթ չի լսում,
 3. վոր դրա համար անհրաժեշտ է ստեղծել անհրաժեշտ հարմա-
 րություններ և ունենալ վորակյալ կաղեր: Վորքան հիմնավոր է
 և հասկանալի վերջին պատճառաբանությունը, թեև հարմարու-
 թյուններ ու կաղեր կարելի չեն ստեղծել մեր բոլոր կուլտուր-
 ստ թյուններում ու խորհանդեսություններում, նույնքան ան-
 հիմն են առաջին յերկու պատճառաբանությունները: Նախ՝ հոր-
 թի անշատելու դեպքում կովի կաթ չտալու պատճառը վոր թե
 այն է, վոր հորթը չծծելով կուրծք չի գրգռում, և կաթ չի ար-
 տաղրվում, ինչպես միամտորեն մտածում են վրամանք, ալլ դրա
 պատճառը սովորությունն է կովը սովորում է կթվել իր հոր-
 թով և տեսնելով նրան՝ տրամադրվում է կաթ տալ: Դրան ապա-
 ցույց կարող է ծառայել այն, վոր կաթ պահելու դեպքերում բա-
 վական է կովին ցույց տալ հորթը՝ առանց ծծեցնելու, վորպես-
 դի սկսվի կաթի նորմալ հոսանքը, և կոմի սկսի կթվել: Հորթի
 սատկելու դեպքում կովի տակ մենք զգել ենք ուրիշ հորթ, վորը,
 չնայած, ծծել է, բայց և այնպես կովը կաթ բաց չի թողել, իսկ
 յերբ այդ դուր հորթի վրա զգել ենք սատկած հարազատ հոր-
 թի կաշին և ցույց տվել կովին, առանց ծծեցնելու, կոմի սկսել է
 նորմալ կթվել: Վերջին կաթ տալու հակումը կապված է
 այն հորթի հետ, վորին նա ընտանեկան է կթելու ժամանակ:
 Այդ սովորության ուժի չափը տարբեր է լինում առանձին կո-
 վերի մոտ. լինում են դեպքեր, յերբ հորթի սատկելու դեպքում

կողմը նորմալ կերպով կլիմում ե բոլորովին առանց հորթի, կամ ուրիշ հորթով^{*)}։

Ինչ վերաբերում ե այն բանին, վոր իբր թե հորթը չի կա-
րողանում ամանից կաթ խմել, միանգամից անհիմն ե. գրեթե
առանց բացառության, բոլոր հորթերը հենց առաջին օրից հեշ-
տությամբ սովորում են խմել ամանից։ Մեծ մասամբ միանգա-
մայն ավելորդ ե լինում մեծ մասը հորթի բերանը դնելը, վոր
նա ծծի ե սովորի կաթ խմել։

Հարթ կովից անցածիստե անհիմն. — Մոլեկուլց անմիջա-
պես հետո, հորթն առանց մորը ցույց տալու հապտում ե, վո-
րի հետեանքով նա նորմալ կերպով կլիմում ե։ Առաջին անհա-
ջողությունից չպետք ե հոստահատվել ե իսկույն հորթը ցույց
տալ, պետք ե առաջին օրերը չարհաբլել, ունենալ ավելի շատ
համբերություն, համառություն ե, անպայման, չնչին բացառու-
թյուններով, կարելի չե հասնել գրված նպատակին։ Անհամե-
մատ հեշտ ե հորթն անջատել խամածիններից. սրանցից պիտի
անջատել 100⁰/օ-ով։ Սխալ ե այն տեսակետը, վոր հորթը մորից
կարելի չե կամ հնարավոր ե անջատել միայն այն դեպքում,
յբր ծնվելուց հետո հորթն անմիջապես հեռացվում ե ե մորը
ցույց չի տրվում։ Յիդել են դեպքեր, յբր մեղ հաջողվել ե մի-
անգամից, առանց վորեկ դժվարություն, հորթն անջատել նաե
ծնվելուց 10 — 15 օր, նույնիսկ մեկ ամիս հետո։ Առանց հորթի
կլիմելու խնդրում, կովի անհատականությունը խոշոր նշանակու-
թյուն ունի, բայց, ընդհանուր առմամբ, հորթով կլիմողներից
շատերը սովորում են իրենց հորթերին ե կաթը բաց են թողնում
հորթերին տեսնելուց ե հոտոտելուց հետո։

Այսպիսով նրանց մեջ առաջ ե դարիս պայմանական բեֆ-
լեքս, վորի առաջ բերողը նախ ե առաջ հորթի տեսքն ե ե հո-
տը։ Սակայն ծծելու ակտն ել վորոշ չափով բեֆլեքս ե հանդի-
սանում, վորը թեև ընդհանրապես ունի յերկրորդական նշանու-
կություն, բայց առանձին կովերի մոտ նրա ազդեցությունը կա-
րող ե ուժեղ լինել։ Դրա հետեանքով առանձին կովեր ավելի
հեշտություններ են կաթը բաց թողնում։ Ուրեմն, մենք այստեղ ու-
նենք իրար հաջորդող բեֆլեքսների մի շղթա, վորի միասնական

*) Միանգամայն ճիշտ են հեղինակի դատողությունները։

ներդրությունը թեև ավելի ուժեղ ե, քան առանձին ողակնե-
րինը, բայց վճռական դերը տակավին խաղում են հորթի տեսքն
ու հոտը։ Այս բեֆլեքսը շատերի մեջ շատ թույլ ե դարդացած,
վորի հետեանքով այդպիսի կովերին հեշտ ե սովորեցնել կթել
առանց հորթի։ Մեր տեղական կովերի մեջ պատահում են ե
այնպիսի կովեր, վորոնք առանց հորթի չեն կլիմում, նույնիսկ
յբր առաջին ծնից անջատենք հորթը։ Սրանց մեջ բաց յերե-
վոյթին մայրական բնազդը շատ ուժեղ ե դարդացած։ Բարե-
բախտաբար, նման կովերի թիվը շատ քիչ ե։ Այս խնդրի մա-
սին տես Ս. Յերիցյանի «Տեղական կովերն առանց հորթի կթե-
լու պրոբլեմը»^{*)}։

Կովն առանց հորթի կթելն ունի մի շարք առավելություն-
ներ. 1) նա հնարավորություն ե տալիս ճիշտ կերպով վորոշել
հորթին տրվելիք կաթի քանակը, վոր մատղաշների աճեցման
գործում ունի մեծ նշանակություն. 2) այդ մեթոդի կիրառման
դեպքում հնարավոր ե լինում ճշտորեն վորոշել կովի կաթնատը-
վությունը ընդունակությունները ե դարդացնել այն. 3) անաբատ
կաթի մի մասը հնարավոր ե լինում փոխարինել քաշած կաթով՝
հորթերն աժան ե նպատակահարմար աճեցնելու համար. 4) հոր-
թերին կերակրում ենք միայն առողջ կովերի կաթով. 5) ցան-
կացած ժամանակ կարողանում ենք հորթերը հանձնել կամ վա-
ճառել այլ տնտեսությունների, կազմակերպությունների. 6) կաթ
խմեցնելը կըճատում ե կովերի կթի տեղությունը, բարձրացնում
ե աշխատանքի արտադրողականությունը, ե այլն, ե այլն։

Սակայն այդ մեթոդի մեխանիկորեն կիրառումը՝ առանց
անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու, հաճախ տալիս ե բա-
ցաստկան արդյունք։ Ձեռքով կերակրելու համար պահանջվում են
լավ կահավորված, բաժանմունքների վերածած հորթանոցներ,
հարմարությունների ե ամանեղենների, կաթն անհրաժեշտ աստի-
ճանի տաքացնելու հարմարություններ, բոլոր ամանեղենների, հոր-
թերի ե կաթ կշռելու կամ չափելու հարմարությունները բացառիկ
մաքուր պահպանելը ե, վերջապես, պահանջում ե վորակյալ կաղ-
րեր, կերակրող հորթապահներ, կթարներ, վորոնցով, ցավոք

*) Հմեղ Պետական համալսարանի «Դիտական տեղեկություն», № 5,
1930 թ. Ծր. խմբ.

սրտի, մեր տնտեսությունները, մանավանդ ԿԱԾ-երը, մեծ մասը ներկայումս դեռ ապահովված չի: Իսկ յեթե այդ ամենը չկա, բավական է, վոր մատղաշը խմի սառը կաթ, կեղտոտ ամանից, վորպեսզի տարածվեն զանազան հիվանդություններ, մանավանդ փորլուծը—հորթի այդ թշնամին:

Բազարչայի տնտեսության մեջ մենք կիրառում ենք հետեւյալ ձևը. բոլոր նորածին հորթերին, մանավորապես խամածին կովերից փորձում ենք անջատել անմիջապես առաջին օրից: Ամեն մի հաջող ազատած և դաստիարակած հորթի համար բանվորն ստանում է գրավական նվեր (վորպես գործավարձի մի հոգված), յեթե անջատումն առաջին օրը չի հաջողվում—կովը չի յենթարկվում, հորթն ամանից չի խմում, մենք հորթը թողնում ենք ծծելու և 5 օրից, 10 օրից, անգամ մեկ ամսից հետո նորից ենք փորձում անջատել, և այդ շատ դեպքերում հաջողվում է ու ապրիս և դրական արդյունք: Հակառակ դեպքում հորթն անեցնում ենք կովի տակ ծծեցնելու մեթոդով:

II. ԴԱԼԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դալն (առաջին օրերի կաթը) իր բաղադրությամբ ու ներգործությամբ զգալի չափով տարբերվում է սովորական կաթից, ուստի դալով կերակրելու հարկավոր է հատուկ մոտեցում ունենալ:

Հորթի կերակրման առաջին օրը (դալով).—Պետք է կատարվի քիչ-քիչ բաժիններով և հավասար ժամանակամիջոցներում: Առաջին օրը դալ տրվում է հիմնականում աշնքան, վորքան հորթը խմում է և, միջին հաշվով, հավասար է լինում 2—2,5 լտրի, հաջորդ 4—5 օրերի ընթացքում հասնում է 3 լտրի: Նկատի ունենալով այն, վոր մեր տեղական հորթերը միջին քաշը ծնվելու ժամանակ կազմում է 19—25 կիլոգրամ՝ հիշյալ նորման միանգամայն բավարար է և կազմում է նրանց քաշի $1\frac{1}{7}$ — $1\frac{1}{8}$ -րդ մասը: Բայց այդ նորմաները միայն ուղեցույց են. ամենակարևորն այն է, վոր յուրաքանչյուր մատղաշի նկատմամբ պիտի ունենալ անհատական մոտեցում, յեթևելով նրա ընդհանուր վիճակից, մարսելու գործողությունից և ըստ այնմ կարգավորել նրա նորման: Դրա հետ միասին, մեծ նշանակություն ունի առաջին 1—3 օրը, որպես մի քանի անգամ և հավասար ժամանակամիջոցներում կերակրելը:

Մեզ մոտ հորթերն առաջին 2 օրը կերակրվում են 4 անգամ, հետևյալ կարգով. առաջին անգամ՝ ծնվելուց $1\frac{1}{2}$ —2 ժամից հետո և ապա յուրաքանչյուր 4 ժամից հետո: Յեթե հորթը կերակրվում է ծծեցնելու միջոցով, այդ դեպքում տրվելիք կաթի—դալի նորման կարելի չի կարգավորել՝ խմանալով տվյալ կովի որակաւ կաթնատվությունը. իսկ դա, չնչին բացառությամբ, հայտնի չէ մեր խորհրտնտեսություններին և կոլտնտեսություններին, ծծեցնում ին կովի պտուկները համապատասխան քանակով. յեթե կովն ամբողջ օրվա ընթացքում տալիս է 6 լիտր կաթ և հորթին պետք է տալ 2,5—3 լիտր կաթ, ապա՝ բավական է ծծեցնել միայն 2 պտուկներից*): Փորձերը ցույց են տվել, վոր անգամ ձեռքով կերակրելու մեթոդի դեպքում նպատակահարմար է առաջին 1—5 օրը հորթը ծծեցնել կովի տակ, յեթե, իհարկե, կովերը սովորած են առանց հորթի կթվելու և դա հետագայում բարդություններ չի ստեղծի անջատ կերակրելու գործում: Այդ տեսակետը հիմնավորվում է նրանով, վոր առաջին օրերը մոր կրծից ծծելով՝ հորթն ստանում է նորմալ ջերմություն և մաքուր դալ, քանի վոր կթվելու ժամանակ, վորքան էլ մաքուր պայմաններ լինեն, այնուամենայնիվ կաթի մեջ ընկնում են զանազան միկրոօրգանիզմի, կովի մարմնից, ամանեղենից, կթողի ձեռքերից և այլն: Առաջին կաթը—դալը—հորթն առաջին օրերում պետք է ստանա անպայման, նախ՝ վորպես անփոխարինելի սնունդ, վոր (դալը) իր մեջ պարունակում է բոլոր անհրաժեշտ սննդանյութերը, հանքային աղերը (տես աղյուսակ 6), յերկրորդ՝ վոր նա չափազանց դյուրամարս է, միաժամանակ ունի փափկացնող (լուծողական) հատկություն, վորը չափազանց կարևոր է հորթի աղիքներում

*) Հեղինակի կողմից կիրառվող այդ ձևը վորքան էլ դրական արդյունք տված լինի, այնուամենայնիվ դա պայմանով միջոց է, վորովհետև պտուկները միջոցով անհնար է նորմավորել կաթի սնունդը, կամ կաթի քանակը հորթի նորմավորումը՝ կովը մանկած տոկոսներով, ըստ միջանցիկ թվում է, վոր կաթի նորմավորումը՝ կովը հորթով կթելու դեպքում ավելի ռեալ բնույթ կստանալ, յեթե հորթը թողնվի մոր մոտ միայն յեղնելու համար, բայց թույլ չտրվի վոր ծծի, իսկ կթելուց հետո արվի նորմայով հասնելիք կաթը խմելու: Այս մեթոդի մասին տես պրոֆ. Խ. Յերիցյան ԷԿՈՒՆ առանց հորթի կթելու անհրաժեշտությունը՝ Երոշյուրը 1921 թ.:

Պր. Խմր.

գոյացած առաջին թրիքը մաքրելու համար: Վերջապես դալն իր բաղադրիչ մասի՝ գլորուլին կոչվող սպիտակուցային նյութի մեջ պարունակելով վառականեթ նյութեր (խմուկային մարմիններ)՝ հանդիսանում է խոտոր պրոֆիլակսիկ ֆակտոր, բնդունակ զարմեկով մաքրաթի սրգանիզմին կուլելու զանազան վառակիչ հիվանդությունների դեմ, վորոնք այնքան մեծ սպառնալիք են հանդիսանում հոթի կյանքի սկզբնական օրոշմուն: Վերջապես այդ «գլորուլին» ու «ալբումին» սպիտակուցային նյութերի բարձր տոկոսի պարունակությունը և գլխավորապես, վոր դալը տարբերվում է նորմալ կաթից (տես աղյուսակ 6):

Այս (№ 6) աղյուսակում ցույց տրված էինգերորդ օրվա բաղադրությունը մոտենում է նորմալ կաթի բաղադրությանը:

Աղյուսակ № 6

Դալի բաղադրությունն քս ուրերի (քս պրոն. Գ. Ինիսովի):

Կթելու ժամանակը	Թթվությունը քս	Ճարպ	Սպիտակուցներ	Կալցիւն	Ալբումին և գլորուլին	Շաքար	Զոր նյութ	Մոլբիլ
	Տ	ո	կ	ո	ո	ն	ե	ր
Մեկուց անմիջապես հետո	44,0	5,10	20,33	6,12	13,06	2,09	29,35	1,22
12 ժամից հետո	40,5	2,33	12,41	4,22	7,80	3,34	19,16	1,02
24 > >	34,3	3,35	7,47	3,93	3,27	4,00	15,64	0,97
35 > >	31,0	2,40	6,17	3,83	2,11	3,95	16,34	0,97
48 > >	30,0	4,45	5,47	3,18	1,63	4,15	14,54	0,93
60 > >	27,0	4,55	4,96	3,46	1,39	4,25	14,15	0,93
72 > >	26,5	3,45	4,61	3,31	1,13	4,61	13,28	0,92
96 > >	25,0	3,83	4,29	3,19	0,98	4,70	13,53	0,91
5 օրից հետո	22,0	3,20	3,83	2,90	0,85	4,81	12,60	0,88

Դալի՝ վերելում բերած՝ հատկություններից յեկնելով է, վոր առանձին հեղինակներ առաջարկում են դալով առատ կերակրել հորթին նրա կյանքի առաջին օրերում: Ահա Ոմսկի ջրջանի փորձ-

նական զոնալ կայանի դիտ. աշխատող Ուդոլսկաւ առաջարկը՝ դալով կերակրելու որական նորմաների մասին՝ Սիբիրի տավարի նկատմամբ (նա առաջարկում է որական 3—5 անգամ կերակրել դալով):

Աղյուսակ № 7

Որը՝ ծնվելուց հետո	Դալի նորման (կիլոգր.)
1-ին	3,0—4,0
2-րդ	4,0—4,5
3-րդ	4,5—5,0
4-րդ	5,0—5,5
5-րդ	5,5—6,0

Առաջին 5 օրվա ընթացքում ընդամենը նա տալիս է 22—25 կիլոգրամ դալ (այս աղյուսակը վերցված է պրոֆ. Լիսկունի և բրիգադի— «Выращивание молодняка крупного рогатого скота» գրքից, հրատ. 1934 թ.):

Դալով կերակրելու շրջանը տևում է 5—6 օր, վորից հետո հորթն սկսում է խմել նորմալ կաթ, վորի չափը յուրաքանչյուր օր ավելանում է հորթի քաշի աճմանը համապատասխան, դրա համար էլ անհրաժեշտ է պարբերաբար կշռել հորթին 10 օրը մեկ անգամ:

II- ՋՈՒՏ ԱՆԱՐԱՅ ԿԱՅՈՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Մեկ մոտ՝ Հայաստանում կոլտնտեսությունների և խորտանտնտեսությունների մեծ մասում դժբախտաբար հորթերն աճեցվում են ձմեցնելու միջոցով—անարատ կաթով:

Այս կապակցությամբ հարց է ծագում. անարատ կաթի այն քանակը, վոր սահմանվում է հորթին ձմեցնելու կամ խմեցնելու համար, վորքան ժամանակում պետք է տալ: Մեր դիտողությունները ցույց են տվել, վոր հորթն ավելի լավ է աճում, յերբ այդ նորման, թեկուզ և ձմեցնելու դեպքում, տրվում է առաջին յերեք ամիսների ընթացքում, ընդ վորում սահմանված նորմայի, օրինակ, 200 լարի 50%՝-ը՝ առաջին ամսում, 30%՝-ը՝ յերկրորդ ամ-

Քաշած կաթն անարատից տարբերվում է նրանով, վոր շատ քիչ ճարպ և պարունակում (քաշած կաթի մեջ մնում է մոտ 0,2% ճարպ), իսկ մնացած բոլոր բաղադրիչ նյութերը, վորոնք կան անարատ կաթի մեջ, գտնվում են նաև քաշած կաթի մեջ, դրանց թվում նաև մատղաշների աճման համար չափազանց կարևոր նյութերը, ինչպիսիք են՝ սպիտակուցները և հանքային աղերը: Յեթե նկատի առնենք, վոր քաշած կաթը պարունակում է մոտ 3,2% սպիտակուցներ, վորոնք մարմնում են մոտ 95%-ի չափով և դրանից կուտակվում է մարմնում մոտ 60%-ը, իսկ կաթի մեջ յեղած 0,7% հանքային նյութերից կուտակվում է մարմնում մոտ 75%-ը, ապա պարզվում է, վոր մատղաշի մարմնում 1 կիլոգրամ սպիտակուց (միս) կուտակելու համար բավական է հորթին խմացնել 45,5 լիտր քաշած կաթ:

Բայց, ցավոք սրտի, մեզ մոտ՝ Հայաստանում կուտակես սուբյուկտների և խորհրտեսուբյուկտներին 90%-ից ավելին քաշած կաթը չեն ոգտագործում վորպես մատղաշների կեր, լավագույն դեպքում վորոշ տնտեսուբյուկտներ նրանից պատրաստում են ցածրարժեք «չեչի» պանիր, իսկ մեծ մասն ուղղակի թափում են վորպես կաթի մշակումից հետո մնացած «անպետք» մնացորդ: Պարզելու համար, թե մեր յերկիրը վորքան մնաս է կրում քաշած կաթը վորպես մատղաշների կեր չօգտագործելու հետևանքով, կատարենք մի փոքրիկ հաշվարկում: Հայաստանում կա մոտ 200.000 գլուխ կով, վորոնց ճնշող մեծամասնուբյուկտներ գտնվում է խորհրտեսուբյուկտներում: Յեթե յուրաքանչյուր կովի տարեկան կաթնատուբյուկտն է ընդունենք 800 լիտր, յերկրում ստացվող կաթի քանակը տարեկան կկազմի 160.000 տոնն, ընդունելով, վոր այդ կաթի մոտ 40%-ը կամ 64.000 տոննը վերամշակվում է յուղի՝ ստացված քաշած կաթը հավասար կլինի մոտ 60.000 տոնն: 60.000 տոնն քաշած կաթը հորթերին խմացնելու դեպքում (մեկ հորթին կարելի չե խմացնել 300—500 լիտր) յերկիրը կըստանա մատղաշների քաշի աճ, կամ, պարզ արտահայտված 1200 տոննա միս: Պետական գներով մեկ տոննը հաշվելով 3000 ուլալի՝ դա կազմում է 3.600 հազար ուլալի: օ

Այս տնտեսական եփեկտից բացի, քաշած կաթի կերակրու-

մը նպաստում է մատղաշների արագ և լավ զարգացմանը, հետևվաբար և՛ սոցիալիստական հոտի վորակի բարձրացմանը: Այս բոլորից պետք է յեղրակացնել, վոր մեր կուտնտեսուբյուկտներն ու խորհրտեսուբյուկտները պարտավոր են աճեցնակարճ ժամանակաընթացքում ձեռնարկել քաշած կաթի, ոգտագործմանը: վորպես հորթերի լավագույն և արժան կերի:

Գառած կտր խմացնելու կտրգն ու սեխնիկան կայանում հետեյալում. քաշած կաթը տրվում է անարատ կաթի հետ միաժամանակ, նա խմացվում է նույն ջերմությամբ, ինչ ջերմությամբ՝ անարատ կաթը (36—38° Ց.), սկսած ծնվելու 15-րդ օրից՝ սկզբում քիչ քանակով—որական 0,5 լիտր, ապա աստիճանաբար ավելացնելով և հասցնելով որական մի քանի լիտր, համաձայն հորթի պահանջների: Հետագայում անարատ կաթի քանակը պետք է պակասեցնել՝ աստիճանաբար փոխարինելով այն քաշած կաթով:

Քաշած կաթը պետք է խմացնել մաքուր ամանի մեջ, թարմ վիճակում, անարատ կաթը սերգատելուց աճեցնակապես հետո: Կաթի ջերմությունը մեկ ամսականից փոքր հորթերի համար 30° Ց պակաս չպետք է լինի. 2—3 ամսական հորթերին կարելի չե խմացնել ավելի ցածր ջերմությամբ, բայց վոչ պակաս 25°-ից: Հին, թթված, քաշած կաթն արգելվում է խմացնել հորթերին: Յեթե կարիք է լինում քաշած կաթը (ինչպես անարատ կաթը) տաքացնել, այդ պիտի կատարել հետեյալ կերպ. վառարանի վրա նախորդ առանձին ամանով տաքացվում է ջուրը և այդ տաք ջրի մեջ դրվում է առանձին ամանով կաթը, այդպիսով բարձրացնելով կաթի ջերմությունը մինչև ցանկացած աստիճանը: Ստորև բերում ենք անարատ ու քաշած կաթ խմացնելու սըխեման՝ ուժեղ կեր տալու հետ միասին:

(Աղյուսակը տես հաջորդ էջում)

Այս սխեման օրինետիր է. հորթերի խոշորության և քաշած կաթով կերակրելու գործի հաջող կազմակերպման դեպքում, քաշած կաթի որական նորման, սկսած չորրորդ տասնորյակի սկզբից (30-րդ օրից)՝ կարելի չե բարձրացնել մինչև 6 լիտր:

Խորհրտեսուբյուկտների Հայաստանի տրեսուր, վերջին յերկու տարիների ընթացքում յուրաքանչյուր հորթին սահմանում է 140—150 լիտր անարատ կաթի և 300 լիտր քաշած կաթի նորմա,

Մարտի 9
Հարթիկն անառատ լիվ հատն կարով կերակրելու սխեմա (բաժնավորված)

Հարկման համար	Անառատ կաթ (կերակրում)										Փաշած կաթ (կերակրում)										Ուժեղ կեր (կերակրում)				Կոտորած կեր	Կոտորած	Կեր	Կեր		
	Ուժեղ կաթ (կերակրում)										Փաշած կաթ (կերակրում)										Ուժեղ կեր (կերակրում)									
	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2	3	4					5	6
1	1.5	2.0	2.5	2.5	3.0	3.5	4.0	4.0	4.5	4.5	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
2	5.0	5.0	5.0	5.5	5.5	5.5	5.5	6.0	6.0	6.0	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
3	5.5	5.5	5.0	5.0	4.5	4.5	4.0	4.0	4.0	4.0	0.5	1.0	1.5	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	0.1	0.2	0.3	0.4	0.5	0.6	0.7	0.8	0.9	1.0
4	3.0	3.0	3.0	3.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	3.5	3.5	3.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	0.3	0.4	0.5	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2
5	2.0	2.0	1.5	1.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	4.5	4.5	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	0.4	0.5	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2	1.3
6	—	—	—	—	—	—	—	—	—	—	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	0.5	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2	1.3	1.4
7	—	—	—	—	—	—	—	—	—	—	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	4.5	0.5	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2	1.3	1.4
8	—	—	—	—	—	—	—	—	—	—	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2	1.3	1.4	1.5
9	—	—	—	—	—	—	—	—	—	—	2.0	2.0	3.0	3.0	2.0	2.0	1.0	1.0	1.0	1.0	0.6	0.7	0.8	0.9	1.0	1.1	1.2	1.3	1.4	1.5

Ընդամենն անառատ կաթ՝ 170 կգ

Փաշած կաթ՝ 250 կգ

Խտացված կեր 48 կգ

V. ՔԱՇԱԾ ԿԱՅԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲԱԶԱՐԱՑԱՅԻ ԽՈՐՀՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔ

Հորթերին քաշած կաթով կերակրելու դործը մեր տնտեսության մեջ ձեռնարկված և 1935 թ. սկզբներից: Դրա տնտեսական և ֆիզիկոսական կարևոր յե հաստատել հետևյալ փաստերով: մինչև հորթերին քաշած կաթով կերակրմանն անցնելը № 2 ֆերմայում 130 հատ հորթի համար որակյան ծախսվում էր 400 լիտր անառատ կաթ, իսկ ներկայումս ծախսվում է որակյան մոտ 200 լիտր անառատ կաթ և 400 լիտր քաշած կաթ: Սյուդիսով որակյան միայն մի ֆերմայում տնտեսվում է 200 լիտր անառատ կաթ, վոր, ըստ խորհրդատեսության համար հաստատված ինքնարժեքի, կազմում է 200 ռուբլի, իսկ 400 լիտր քաշած կաթն ըստ ինքնարժեքի կազմում է 20 ռուբլի, տալով խնայողություն որակյան 180 ռուբլի: Ինչ վերաբերում է քաշած կաթի՝ վորակյան կերի՝ անմիջական ոգտավետությունը, ապա պետք է ասել, վոր քաշած կաթը հորթերը լավ մարսում են և տալիս են միանգամայն նորմալ աճ: Քաշած կաթը հորթերին տրվում է թարմ վիճակում, ֆերմայի ներսում, անմիջական սերգատելուց հետո: Մինչև որդեռ չի նկատվել քաշած կաթով կերակրվող հորթերի վոչ մի հիվանդության դեպք:

VI. ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ՅԵՏԿԱԾՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հորթերի կերակրման յերկրորդ կամ, ինչպես ընդունված է ասել, յետկաթնային շրջանն սկսվում է այն մոմենտից, յերբ ռացիոնից ամբողջովին հանվում է կաթը և տրվում են այնուհետե միայն խտացրած, կոպիտ և հյութալի կերեր կամ թողնում են արոտի: յետկաթնային շրջանը դարձանը զուգադիպում է արոտային շրջանին և արոտի կանաչ խոտը հանդիսանում է հորթերի հիմնական կերը: Վորքան ճիշտ և այն տեսակետը, թե կաթնային շրջանը հանդիսանում է հորթերի աճեցման պատասխանատու շրջանը, նույնքան էլ սխալ է այն տեսակետը, թե յետկաթնային շրջանն ուժերի առանձին լարում չի պահանջում: Քիչ չենք լսում անասնապահության բնագավառում աղյուսակներից, այսպիսի արտահայտություններ՝ «յերբ կգա աղբիլ-մայիս ամիսը, վոր հորթերը դուրս թողնենք և գլուխներս աղատվի» կամ «յեթե

մինչև մայիս ամիս հորթերը պահենք չստանան, նրանից հետո վոչինչ չի լինի: Այս տեսակետներն անհիմն, սխալ ու վտանգավոր տեսակետներ են և պետք է խիստ կերպով դատադարձվեն: Յեւ-կաթնային Երջանը հորթերի անհիմն գործում հալմայիսի պատշաճացումը Երջան է, ինչպես յիվ կաթնայինը, ու պահումը ու ռեբի վոչ պակաս լուրջ:

Նորմալ դարգացած, ամբողջ և առողջ սերունդ ստանալու համար մատղաշների կերակրումը պետք է ապահովել հիմքերի վրա դնել և՛ յետկաթնային շրջանում: Այն դեպքերում, յերբ հորթերի խնամքի գործն ավարտված են համարում կաթնային շրջանի ավարտումով, վորից հետո հորթերին թողնում են անուշադրության՝ հորթերը մնում են նվազ, չդարգացած, չեն կարողանում լրիվ կերպով հայտարել իրենց արտադրողական ընդունակութունները և, հետևապես, չեն կարող հանդիսանալ սոցիալիստական հորի վորակը բարձրացնող բեղերով:

Մատղաշների անհիմն ալգայիսի անուշադր վերաբերմունքը ցուցաբերելու պատճառներից մեկը հանդիսանում է այն սխալ հասկացութունը, վոր յեթե մեկ մոտ անասունների ցեղի լավացման և վորակի բարձրացման հիմնական մեթոդն ընդունված է մետիսացիան՝ կուլտուրական ցեղերի անասունների հետ, ապա, իբր թե, տեղական ցեղերի վորակի բարձրացումը յերկրորդական նշանակութուն ունի: Ընդհակառակը, հենց մետիսացումը հաջող կատարելու համար անհրաժեշտ է, վորպեսզի բարելավվի մետիսացման յենթակա անասունների այն հիմնական մասսան, վորը կազմում է տեղական անասունների ցեղը, վորքան բարձրորակ լինի մետիսացման յենթակա անասունը: այնքան արագ և լավ արդունք կտա այն (մետիսացիան): Դա նշանակում է, վոր մատղաշների կերակրումն ու խնամքը ինչպես կաթնային շրջանում (մոտ 3—3½ ամսական հասակը), նույնպես էլ նրանից հետո՝ յետկաթնային շրջանում պետք է այնպիսի ապահովում և մոտածված կերպով կազմակերպել, վոր նրանք տան հնարավոր առավելագույն ան, լինեն առողջ և ամրակազմ անասուններ: Մատղաշ հասակում անասունն ինտենսիվ կերպով աճում է, դրա համար էլ նրա որդանիդը պահանջում է առատ սննդարար նյութեր, մասնավորապես սպիտակուցային նյութեր և հանքային աղեր, զբա համար անհրաժեշտ է հորթերին յետկաթնային շրջանում ևս

կերակրել նորմալ և լիովին ապահովել նրանց պահանջը: Անող մատղաշի կերի նորման պետք է բավարարի հորթի աճի պահանջներին: Այդ հիման վրա Միութենական Հողթողկոմատը մշակել և տվել է մատղաշների կերակրման հետևյալ նորմաները, վորոնց մեջ են մտնում նաև յետկաթնային նորմաները: Հիմնականում այս նորմաներով ղեկավարվում են մեր անասնապահական տնտեսութունները:

Աղյուսակ 10

Մատղաշների կերակրման նորմաներն ըստ ԽՍՀՄ Հժ-ի

(Յուրաքանչյուր 100 կիլոգրամ կենդանի քաշին որական)

Հորթի հասակը ամիսներով	Կերային միավոր (կգ)	Մարմնի սպիտակուց (գրամ.)		Հորթի հասակը ամիսներով	Կերային միավոր (կգ)	Մարմնի սպիտակուց (գրամ.)	
		Մեկ կերային միավորին	100 կգ կենդանի քաշին			Մեկ կերային միավորին	100 կգ կենդանի քաշին
1	4,3	115	500	13	1,8	90	160
2	3,7	110	410	14	1,7	90	150
3	3,3	105	350	15	1,6	90	140
4	3,1	100	310	16	1,5	90	140
5	2,9	100	290	17	1,5	85	130
6	2,6	100	260	18	1,5	85	130
7	2,4	100	240	19	1,4	85	120
8	2,3	100	231	20	1,4	85	120
9	2,2	95	210	21	1,4	80	110
10	2,1	95	200	22	1,3	80	105
11	2,0	95	190	23	1,3	80	105
12	1,9	95	180	24	1,3	80	105
միջինը մեկ տարում	2,7	100	270	միջինը յերկու տարում	1,5	85	130

4. ԱՐՈՏԸ ՅԵՎ ՆԲԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հորթերի կերակրման յետկաթնային շրջանում չափազանց կարևոր տեղ է զբաղում արոտային կերակրումը: Յեթե նկատի

առնենք արոտային խոտի հարուստ լինելը սպիտակուցային նյութերով, հանքային նյութերով, վիտամիններով և նրա անհամեմատ եծան լինելը, պարզ կլինի թե վորքան կարևոր և արոտի կազմակերպումը և նրա ռացիոնալ ոգտագործումը: Բայց միայն զբաղվել չի սահմանափակվում արոտի նշանակությունը. նա ապահովում է մատղաշների մարմնի զարգացումը, վոսկրների ամրացումը, մկանունքի ամրացումը, առողջության ամրապնդումը, վորի մեջ մեծ դեր են խաղում արևի ուլտրա-մանիշակազույն ճառագայթները: Արոտից հրաժարվելու բոլոր փորձերը բացասական արդյունք են տվել: Արոտին խոշոր նշանակություն տալով՝ մենք խորհանտեսություն մատղաշները մինչև նոյեմբերի 15 ապահովում ենք լավորակ արոտով՝ ամրացնելով բուսականություն հարուստ, ամենամոտ և հարմար շրջանները:

Հորթերն արոտի պետք է սովորեցնել աստիճանաբար, սկսած որական կես ժամից՝ հասցնելով 7—8 ժամի: Հորթն արոտի պետք է սովորեցնել մոտ 80—90 որական հասակից:

Մեր դիտողությունները ցույց են տվել, վոր հորթերն ալիկի վաղ հասակում (1,5—2 ամսական) արոտ տանելիս շատ հաճախ հիվանդանում են փորլուծով, իսկ ալիկի ուշ արոտի հանելու դեպքում՝ 3,5—4 ամսական հասակում, նրանք համեմատաբար նվաղ են մնում: Մինչև արոտի անցնելը, դեռ կաթնային շրջանում, ինչպես և արոտի սկզբնական շրջանում, հորթերին պետք է տալ չոր խոտ և ուժեղ կեր, մինչև նրանց ստամոքսն ընտելանա հյութալի կերին: Հորթերն արոտ պետք է հանել առավոտյան (շաղը բարձրանալուց հետո) և հետճաշյան հով ժամերին, կեսօրվա շոգին արածեցնել չի կարելի, այդ ժամերին նրանք պետք է հանգստանան արևից պատսպարված հորթանոցներում:


Հորթերն արածեցնելու համար պետք է առանձնացնել Ֆերմաների ամենամոտ արոտները, հնարավորություն դեպքում պետք է այդ արոտները ջրել և ցանկապատել: Արոտը պետք է ոգտագործել մաս-մաս, աստիճանաբար մի տարածությունից անցնելով մյուսը, սկզբում արածեցնել հարավային լանջերը, այսպես կոչվող՝ «դռնանց» տեղերը, վորովհետև այդ լանջերում խոտը շուտ է չորանում:

Ձուրը հորթերի համար նույնպես կենսական պահանջ է, բայց ջուր խմելու կարիք նա զգում է մանավանդ այն ժամանակ, յերբ

կրճատվում է կաթի նորման և ռացիոնում մացվում են կոպիտ և խառցած կերեր: Բայց անհրաժեշտ է այստեղ պարզաբանել, վոր չնայած 21 որյա հասակից սկսում են հորթին տալ կոպիտ, խառցած կերեր քիչ նորմայով, սակայն այդ ժամանակ ջուր տալու կարիք չկա, անգամ վտանգավոր է: Մենք ջուր սկսում ենք տալ 26—27 որական հասակից, փորլուծ ունեցող հորթերին՝ մեկ ամսական հասակից. մեր դիտողությունները ցույց են տվել, վոր

Սխեմա № 2

Մասշտաբ $\frac{1}{10,000}$



Բուզարայի խորհունտերը պահվում են 1-2 արվա ընթացքում՝ սերի բաժանված:

Ֆուրաբանչյուր արոտամաս ոգտագործված է 1—2 արվա ընթացքում հերթականությամբ, այնպես, վոր յուրաքանչյուր խումբը նույն արոտամասն է վերադառնում 10 րեց, իսկ այդ ժամանակամիջոցում արածեցրած արոտամասը նորից ծածկվում է կանաչով:

*) Պարզ է, վոր այդ կապ ունի ջրի վորակի և ջերմության հետ: Առողջ ջուրը փորլուծ չպիտի առաջացնի. փորլուծի առաջն առնելու համար անհրաժեշտ է մատղաշներին տրվելիք ջուրը յեռացնել, հովացնել մինչև ցանկացած փերմություն ու հետո տալ: Հում և սառը ջուր չպիտի տալ: Մեծոք. խմբ.

Ինչպես աճեցնել հորթերին—3

գաղ ջուր տալու զեղքում տեղի յն ունենում հորթերի ստամոքսի խանգարում*):

Չուրը պետք է խմեցնել կաթ տալուց 2—3 ժամ հետո, լավ է՝ ուժեղ կերք տալուց հետո: Չուրը պետք է լինի մաքուր և ունենա 14—16° ջերմություն: Չուրը պետք է տալ առանձին և մաքրությունը հետևել նույն խստությունը, ինչպես կաթի կերակրման ժամանակ, վորովհետև շատ հիվանդություններ առաջանում են կեղտոտ ջուր կամ կեղտոտ ամանից խմեցնելու դեպքում: Զի թույլատրվում անարատ կամ քաշած կաթին ջուր խառնել և տալ խառնուրդի ձևով, վորովհետև դա կարող է փոքրում առաջացնել:

5. ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄԷԸ

Մաշկը հանդիսանում է մարմնի ջերմահաղորդման կարգավորիչը: Նա մեծ դեր է խաղում ինչպես որդանիզմների ընդունած անհղանդությունների ծախսման անախման գործում, նույնպես եւ նրա առողջության պահպանման գործում: Կաշվի մեջ տարածված բազմաթիվ նյարդերը հանդիսանում են որդանիզմի լավագույն պաշտպանները, նրանք կաշվի միջոցով կանխում են որդանիզմի ջերմության նորմալից դուրս արտածումը, այսինքն՝ մրսելը: Խայթող, վարակ տարածող միջատների հարձակման ժամանակ մինչև նրանց խայթելը՝ կաշվի մեջ յեղած նյարդերը վայրկյանաբար զգուշացնում են կենդանու ինքնապաշտպանության համար, այդպիսով կանխելով զանազան հիվանդությունների մուգն որդանիզմի մեջ: Վերջապես կաշին հանդիսանում է շնչառության և արտաթորիչ որդան, նրա միջոցով գոլորշիանում է մարմնից հեռացվում են ավելորդ ջուրը, փոսապար դազերը և այլն:

Կաշին իր ուսակար դերն որդանիզմի համար կարող է կատարել այն ժամանակ, յերբ նա գտնվում է մաքուր և նորմալ վիճակում, յեթե նա ինքն առողջ է, վարակված չի պարազիտներով, որին տակ՝ բոռով, վոջով, միկատամով, վորն առաջ է գալիս հորթի մարմինը սխտեմատիկաբար չմաքրելուց, չխնամելուց: Հորթի կաշին կեղտոտվում է վոչ միայն յրջապատի, հորթանոցի անմաքրությունից, այլև իրեն՝ բնական ֆիզիոլոգիական դերը կատարելու հետևանքով, քրանքի, ճարպի արտաթորման հետևանքով, կաշվի մեռած բջիջներից առաջացած թեփի հետևանքով, և այլն:

Հորթի կաշին պետք է մաքրել ամեն օր՝ խողանակով և սանրով: Սանրով մաքրելու ժամանակ պետք է դուռ վարվել, վորպեսզի քերվածքներ առաջ չգան, վորովհետև միկրոբներն օրդանիզմի մեջ են մտնում հենց այդ քերվածքների, վերքերի միջով: Բայց միայն խողանակով և քորիչով մաքրելը բավական չի, հորթերին գոն ամիսը մեկ անգամ պետք է լողացնել տաք ջրով և կանաչ ոճառով, սակայն զգուշությամբ, վոր չմրսեն:

Շնչառության որդանների խնամքը.— Սա նույնպես հակապահան դեր է խաղում մաաղաշի նորմալ զարգացման և առողջության ամրապնդման գործում: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, վորպեսզի ժամանակին զարգանան հորթի թոքերը, կրծքավանդակը, քթանցքները, շնչափողը, վոր հորթն ունենա խոր և լայն կուրծք ու կատարի խոր շնչառություն, վորոնք կարևոր է անհրաժեշտ են նրա համար, վոր օրդանիզմին մատակարարեն օդից մեծ քանակությամբ թթվածին գաղ, վորը հարուստացնում է արյունը և արագացնում է արյան շրջանառությունը: Սրա հետևանքով որդանիզմն արյան միջոցով ժամանակին և առատորեն օնդարար նյութեր է ստանում, վորի հետևանքով որդանիզմն արագ աճում և ամրապնդվում է:

Այս բոլորին հասնելու համար ինչ է հարկավոր անել: Պետք է ամառվա ընթացքում հորթերին անպայման ապահովել արտոով, վոր նրանք լինեն սխտեմատիկ շարժման մեջ, վոր միաժամանակ նպաստում է շարժող ապարատի—մկանների, վորակների ամրացմանը: Շարժումն արագացնում է անհղանդությունների յուրաքանչյուրը, հետևաբար և բարձրանում է թթվածնի պահանջն որդանիզմի համար, իսկ այդ պահանջը բավարարում է թոքերը, վորոնք սկսում են ավելի ուժեղ գործել, մի կողմից՝ ավելի շատ թթվածին մատակարարելու, մյուս կողմից՝ որդանիզմում առաջացած անպետք գազերը և ավելորդ ջուրն արտաքսելու համար: Յեվ քանի վոր այն օրդանները, վորոնք ակտիվ են աշխատում, ավելի շուտ են զարգանում և մեծանում, ուստի հասկանալի չէ, ավելի շուտ են զարգանում են հորթի թոքերը, լայնանում վոր այդ բոլորից հետո զարգանում են հորթի թոքերը, լայնանում է սիրտը և խորանում է կրծքավանդակը: Ամառ ժամանակ վերոհիշյալ պայմաններն ստեղծելն անհամեմատ հեշտ է, բայց հորթի կյանքի համար անհրաժեշտ է մոտավորապես նույնպիսի պայմաններ ստեղծել նրա համար ամբողջ տարին, նաև ձմեռը: Այս-


տեղ խնդրիրն այն է, վոր ձմեւը հորթանոցներն ապահովվին թարմ, առատ ողով. դրա համար անհրաժեշտ է ողափոխիչ հարմարութիւններ (վենտիլացիա) ստեղծել բոլոր հորթանոցներում: Այս հարցի վրա, վորպէս կարեւոր նշանակութիւն ունեցող հարցի մենք ստիպւած ենք մի քիչ մանրամասնորէն կանգ առնել. վոր ողափոխութեան նշանակութիւնը գիտակցում են գրեթէ մեր (Հայաստանի) անասնապահական տնտեսութիւններում աշատառզ բոլոր զեկովարները, դժվար թէ կարիք լինի կասկածելու, բայց վոր ողափոխութեան սխառմը Հայաստանի ԿԱՖ-երի, անգամ խորհմանտնութիւնների գոմերում սխալ է կազմակերպւած, դա փաստ է:

Հայաստանի մի շարք ԿԱՖ-երի և խորհմանտնութիւնների գոմերում մենք հանդիպել ենք ողափոխութեան հետևյալ սխառմիքն. կտուրը ծակում և գոմի մեջ են իջեցնում տախտակե խողովակ՝ մինչև 1 մետր յերկարութեամբ (Բաղարշայի կոլտնտեսութեան գոմում խողովակի՝ զեպի գոմի ներսն անցնող՝ ծայրի մասն ընդամենը 16—20 սանտիմետր է): Ահա այն ամբողջը, վոր կոչվում է ողափոխիչ սխառմ: Այդ սխառմն, իհարկէ, չի ապահովում այն պահանջը, վորն առնեն անասունները մաքուր ողի նկատմամբ, և վորը պահանջում է զոռառողջապահութեանը: Վարոնք են այդ սխառմի թերութիւնները:

Ողափոխութեան սխառմը.—Այդ հարցին պատասխանելուց առաջ պետք է պարզել մի խնդիր՝ ինչ գործողութիւններ պետք է կատարի ողափոխիչ սխառմը—վենտիլացիան. 1) նա պետք է ապահովի թարմ, մաքուր ողի սխառմատեղի հոսանքը գոմի կամ հորթանոցի ներսը, 2) նա պետք է գոմից հեռացնի այն վնասակար գազերը, վորոնք մեծ քանակութեամբ առաջանանում են կերերը մարսելու, շնչառութեան և արտաթորանքի հետևանքով (մեռան, ամթաթթու, ամյակ գազերը), 3) նա պետք է հեռացնի ինչպէս գործողութիւնների հետևանքով առաջացած ավելորդ խոնավութիւնը՝ գոլորշիները, 4) քանի վոր գազերի մի մասը (ծանր գազեր) գտնվում են գոմի հատակի մակերևութից շատ քիչ բարձր, իսկ մյուս մասը (թեթեւ գազերը)՝ գոմի ողի վերին շերտում—առատառջին մոտ, ապա ողափոխիչ սխառմը պետք է այնպէս կառուցել, վոր նա դուրս տանի թէ ծանր և թէ թեթեւ գազերը:

Թարմ ողը ձմեւ ժամանակ պետք է այնպէս հոսի գոմի մեջ, վոր անասուններն անմիջապէս չընչեն ձմեռն սառը ողը, այլ նա կատարի վորոշ շրջանառութիւն, վորոշ չափով տաքանա և նոր հասնի հորթերի շնչառութեան որդաններին, իսկ դա չափազանց կարեւոր է մատղայները թոքերը չմարսեցնելու համար: Այս պարզաբանութիւնից հետո դժվար չի պատկերացնել այն թերութեանները, վոր, դժբախտաբար, ունի մեզ մոտ ողափոխիչ սխառմը, ինչպէս հիշեցինք վերևում. նա չի ապահովում ծանր գազերի հեռացումը, չի ապահովում թարմ ողի ինքնուրույն մուտքը, նա ներս է հոսում նույն խողովակով, վորով պետք է դուրս գա կեղտոտւած ողը, վոր անշուշտ խանգարում է թարմ ողի նորմալ հոսանքը (գոմի մեջ), չի ապահովում ներս հոսող թարմ ողի նախնական տաքացումը, և այլն:

Հիշված թերութիւնները վերացնելու և հորթանոցներում, գոմերում նորմալ ողափոխութեան ապահովելու համար անհրաժեշտ է ողափոխիչ սխառմը կառուցել այնպէս, վոր վերևում բերած պահանջներին բավարարի: Այդ պահանջներին միանգամայն



Նկ. 2. Ողափոխութեան սխառմ, բաց կիթակ:

բավարարում են, բազմիցս ստուգւած՝ «Մուրի» և «Կինգի» սխառմները:

Լավ ողափոխութիւն կազմակերպելուց բացի, անհրաժեշտ է ապահովել նաև հետևյալ պայմանները՝

ա) հորթանոցը պետք է լինի չոր և լուսավոր, նա պետք է մաքրվի ամենաքիչն որակաւ 3 անգամ և ախտահանվի վաղ ապակաւ քան տասնորյակում մեկ անգամ.

բ) հորթանոցում պետք է պահպանել մշտական նորմալ ջերմութիւն: Պրոֆիլիտորիայում 15—17° Ց.-ի, մյուս հորթանոցներում 12—13° Ց.-ի: Դրա համար հարկավոր է դրսից և ներսից լավ սփռել պատերը: Եթե կտուրը թիթեղից չէ, լցնել հողի հատու շերտով և սփռել, պատահաններին գցել յերկու տակ փեղկեր,

ունենալ պատի ազդուեւ վառարաններ՝ կարիքի դեպքում վառելու: Վոչ մի դեպքում չի բույրացրելում հորթանոցներում դնել քիքեղյա վառարան, վառվենեւ վերջինս մեկից բարձրացնում է հորթանոցի ջերմաստիւնը յեւ քիչ հետ ստուշում, այսպիսով սեղծելով ջերմութեան մեծ քանակութեւ, վոր մահացու ազդեցութեւն է գործում հորթերի վրա:

գ) հորթերի տակը պետք է փոխ մաքուր, չոր ծղոտե ցամաք, վորը պետք է փոխել սրահան ամենաքիչը 2 անգամ.




Նկ. 3. Խորթի դնչիւ

դ) ձմեռ ժամանակ եւ պետք է ամեն որ դուրս բերել զբոսանքի թե դռի ներսում և թե դրսում, բացառութեամբ անձրեւային, քամաւ և խիստ ցուրտ որերի:

ե) քանի վոր հորթերը վառ սովորութեւն ունեն լինել իրենց շրջապատող առարկաները, պատերը, իրենց սպասարկող բանվորների հագուստը, մեկը մյուսի աղանջները, իրենց պարտը և այլն, իսկ դա պատճառ է դառնում զանազան վարակիչ և վոչ վարակիչ հիվանդութեւնների, ուստի պետք է հորթերին առավել 15—20 որը դնել գնչիւ (տես նկար 3 և 4), վորը կտրել յե պատրաստել զայլար ճյուղերից:

զ) այն արեղները, վորոնց մեջ հորթերը պահվում են սկզբի 10 որը, պետք է պարբերաբար մաքուր ախտահանվեն, դուրս բերվեն արեւի տակ և չորացվեն:

Մտադաւենի կերտիւումն ու խնամք մեկը մյուսի հետ սերտեւ կապված ձեռնարկութեւն են. առանց այդ յերկու միջոցառումների միասեղ կիրաւումն, յերեւ հնարավոր չէ դաւաւն արդարեւներ ստանալ—անեցնել առողջ յեւ զարգացած սերունդ:



Նկ. 4. Հորթը դնչիւսով:

Ե. ԱՆՍԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՂՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՁԸ

Ի. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Մտադաւենի պահանման և աճեցման համար կիրաւիող բոլոր ձեռնարկութեւնը թե կերակրման, թե բուժման, թե խնամքի ու բուժման գծով, կարող են հաջողութեւ կիրաւիվ միայն այն ժամանակ, յերեւ աշխատեւ կազմակերպումն ու վարձարութեւնը զրկած լինեն լավ հիմքի վրա:

Հիմնական սկզբունքը, վորով պետք է դեկավարվել այս խնդրում, հետեւյալն է. խորհանտեսութեւններում և ԿԱՑ-երում պետք է մացնել աշխատանքի մասնաշխատեւ, այսինքն՝ բանվորներին և կոլտնտեսականներին պետք է մասնաշխատեւն ժառողանքի պահանման գործում: Այդ նպատակին հասնելու համար անհրժեշտ է բանվորներին, կոլտնտեսականներին յերկար ժամանակով ամբացնել այդ աշխատանքներին, համեմատել դեպք

վոչ պակաս քան 2—3 տարով, այն հաշվով, վոր սնեցուքյան մեջ սեղծվի հորքապանների, գառնապանների յեղ ալլն՝ մասնագիտացած, իւր գործի բոլոր ներուքյուններին իրապեսած կադր: Անհպատակահարմար և ֆիսաստակար և աշխատողին տարվա ընթացքում մի քանի աշխատանքներին փոխադրելը: Յուրաքանչյուր աշխատողի՝ պետք և ամբասցնել վորոշ քանակի հորթներ, վորոնց համար նա պետք և կրի լիակատար պատասխանատվություն, իսկ դա նշանակում և կատարել կուսակցության պահանջը՝ իսպառ վերացնել դիմագրկությունը և ինքնահոսն աշխատանքի մեջ:

Աշխատանքը վարձատրել քանակական և վորակական ցուցանիշներին հիման վրա՝ գործավարձի կարգով, վորի համար անհրաժեշտ և ստեղծել կայուն (տվյալ կոնկրետ ժամանակի և պայմանների համար) արտադրական նորմաներ, ապահովել աշխատանքի ճիշտ հաշվառումը և լայն ծավալել աշխատանքի սոցիալիստական մեթոդները—սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը:

Հաշվադույն արտադրական ցուցանիշներ ունեցող աշխատողներին, պլանները գերակատարողներին պետք և տալ լրացուցիչ վարձատրություն, դրամական և նյութական (հորթ, դառ, դոշի և այլն) նվերներ, խրախուսանքներ, նրանց պետք և առաջ քաշել ավելի պատասխանատու աշխատանքի և այլն:

Աշխատանքի մեջ պետք և ստեղծել յերկաթյա կարգապահություն, լրիվ, նպատակահարմար ոգտագործել աշխատանքային որն ու ժամը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը՝ ապրով յուրաքանչյուր աշխատողին կոնկրետ պարտականություններ:

Մինչև վերջերս խորհրդատեսություններին աշխատողներին մեջ վեճ կար այն մասին, թե ում պետք և հանձնել մատղայների խնամքը, կերակրումը—կթարներին, թե հատուկ հորթապահների ընդ վորում մի մասը պաշտպանում եր առաջին տեսակետը, մի մասը՝ յերկրորդ, բայց հարցին ավելի ճիշտ եր մոտենում աշխատողների այն մասը, վոր դեմ եր հարցը յերկու հակադիր բեկեւներին բաժանելուն և գտնում եր, վոր ծծեցնելու մեթոդով կերակրելու դեպքում կթարարը նույնպես պետք և պատասխանատու լինի հորթների անցման և պահպանման համար, չնայած վոր հիմնական պատասխանատվությունը կրում եր հատուկ հորթապահները:

Կենտրոնից ստացված վերջին հրահանգի համաձայն (34 թ.), հորթերի խնամքն ու կերակրումը պետք և հանձնել հատուկ հորթապահների, վորոնցից յուրաքանչյուր ֆերմայում կադակերդովում և հորթապահների բրիգադ՝ ավագ հորթապահի գլխավորությամբ, բայց և այնպես, մեր կարծիքով, այնտեղ, վորտեղ կիրառվում և ծծեցնելու մեթոդը, կթարներին ևս պետք և պատասխանատու դարձնել այդ դործում:

Մինգարան-պրոֆիլակտորիայում յուրաքանչյուր 8—10 գլուխ հորթին տրվում և մեկ հորթապահ-կթար: Ընդհանուր բրիգադներում կաթնային շրջանի յուրաքանչյուր 25 գլուխ հորթին տրվում և մեկ հորթապահ, իսկ յետկաթնային շրջանի 50 գլուխ հորթին՝ մեկ հորթապահ:

Հորթապահի պատճախանքյուններ կայանում են նեցվյալում.

1. Նա պետք և մեկուսում կ ճանաչի իրեն ամբացրած բոլոր հորթներին ըստ անունների, համարների, սեռի և հասակի: Նա պարտավոր և ճանաչել յուրաքանչյուր հորթի ժորը, նա պետք և խմանա իր հորթերի անհատական առանձնահատկությունները:

2. Պետք և վորոշված ժամերին կերակրել հորթերին ըստ նշանակված նորմաների:

3. Որական վոչ պակաս քան յերկու անգամ պետք և մաքրել հորթերի մարմինը խողանակով և քորիչով, մարմնի թրքքոտված մասերը լվանալ ջրով ու հորացնի:

4. Չոտեխնիկի և անասնաբուծի ցուցումով պետք և յերբեմն լողացնի հորթերին տաք ջրով (ամառ ժամանակ կարելի յե լողացնել գետի ջրով) և կանաչ կամ սովորական ուտումով:

5. Վոչ պակաս քան որական յերեք անգամ, պետք և մաքրի հորթանոցները կամ անհատական վանդակները, դուրս տանի թրիքը և հորթերի տակ փռի չոր, մաքուր ցամքար:

6. Որական մեկ անգամ հորթերը դուրս հանի մանածելու և մեկ յերկու անգամ (ըստ ներքին կանոնադրության)՝ ջրելու. դա վերաբերում և, իհարկե, մեծահասակ հորթերին:

7. Հորթապահը պարտավոր և խիստ կերպով հետևել հորթերի առողջությանը, նրանց ախորժակին և հիվանդության թեկուղ, ամենափոքր նշաններ հայաբերելու. դեպքում, իսկույն հայտնի գոտանաանաբուժական անձնակազմին և հսկի, վոր անպայման ձեռք տանվեն անհրաժեշտ միջոցներ:

յերբ լավ գիրութիւն մեջ է	յերբ բավարար գիրութիւն մեջ է
աւլազ հորթապահին 1 ա. 45 կ.	1 ա. 05 կ.
հորթապահին . . . 1 ա. 05 կ.	70 կ.

Բացի այդ, պարգև ե տրվում հետևյալ ցուցանիշների համար. յնթե մտուրային շրջանի վերջում ընդունած հորթերն առանց կորստի դուրս ե բերում արոտի, միջակից վոչ պահաս գիրութեյամբ, տրվում ե միանվազ պարգև՝ աւլազ անասնապահին՝ 25 ուռլի, հորթապահին՝ 70 ուռլի:

Այն հորթերի համար, վորոնց գիրութեյունը միջակից ցածր ե, հորթապահները գործարքային վարձատրութեյուն չեն ստանում, նույնպէս ե ընկած հորթերի համար: Հորթերի գիրութեյան աստիճանը վորոշում ե ֆերմայի զոտտեխնիկը ե հաստատում ե ֆերմայի վարիչը:

Անասնաբուժական սանիտարի վարձատրութեյունը:

Անասնաբուժական սանիտարներին ե մեկուտորանում աշխատող հորթապահ-սանիտարներին ամսական հիմնական աշխատավարձ ե վճարվում 80 ուռլի: Բացի դրանից, գործարքի կարգով նրան վճարվում ե յուրաքանչյուր բուժած ե առողջացրած անասունի համար, ըստ հիվանդութեյան բնույթի, հետևյալ կարգով.

1. յուրաքանչյուր հասուն անասունի համար՝ 5—30 ուռլի.
2. յուրաքանչյուր 1—2 տարեկան անաս. համար՝ 3—20 ուռլի.
3. յուրաքանչյուր մինչև 1 տարեկան հորթի համար՝ 2—10 ուռլի:

Սանիտարներին յուրաքանչյուր բուժած անասունի համար վճարելիք պարգևի չափը վորոշում են անասնաբուժը ե զոտտեխնիկը, իսկ հաստատում ե ֆերմայի վարիչը:

Մանքութեյուն.—1. Պարգևները վճարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին, աշխատավարձի հետ միասին:

2. Հիմնական աշխատավարձի գրույքի մեջ՝ ի մտնում հացի քարտային սխտեմի վերացման կապակցութեյամբ արվող հավելումը:

Աշխատանքի կազմակերպման ե վերևում շարադրված գործարքի ձևն ամբողջովին կիրառվում ե Բաղարշայի խորհանտեսութեյունում: Բացի գործավարձը խորհանտեսութեյունում կիրառվում եր դեռ մինչև վերոհիշյալ հրահանգի ստացումը, վորն իր հասարակ ձևով

ե սկզբունքներով համապատասխանում եր մոտավորապէս այն սկզբունքներին, վոր առաջադրում ե նոր հրահանգը:

Այսպէս՝ խորհանտեսութեյունում գրեթե չեւ կիրառվում հորթերին կաթ խմեցնելու մեթոդը: Յերբ գործարքի մեջ նախատեւից յուրաքանչյուր հաջող անջատած հորթի համար 1 աւուրի վարձատրութեյուն կթրար-հորթապահին, այդ աշխատանքներն սկսեցին առաջ գնալ:

Աշխատանքի կազմակերպումը ե գործավարձի կիրառումը Բաղարշայի խորհանտեսութեյան ամբացման, մատղաշների պահպանման լծակներից մեկը հանդիսացավ: Մինչև գործարքի կիրառումը՝ կթրարաները, հորթապահները, անասնապահները, անկախ նրանց աշխատանքի վորակից ե արտադրական ցուցանիշներից, ստանում եյին ամսական 75 ա. կայուն աշխատավարձ, քրիզագիրներն ստանում եյին 127 ա., վորի ժամանակ խորհանտեսութեյունում մատղաշների անկումը հասնում եր 21% ի, կովերի վիժումները՝ 50%-ի: Գործարքի կիրառումը մեկ տարվա ընթացքում վիժումների ե հորթերի անկման տոկոսն իջեցրեց մինչև 5-ի, միջին աշխատավարձը բարձրացավ 25—30%-ի, քիչ չեւ այն կթրարների թիվը, վորոնք ամսական աշխատում եյին մինչև 110—120 ուռլի. նույնն եյին ստանում նաև հորթապահները:

Աշխատանքի կազմակերպման ե գործավարձի կիրառման գործում խոշոր դեր խաղաց կուսակցութեյան կողմից կազմակերպված քաղաքական:

Իրենց աշխատավարձը բարձրացնելուց բացի, Բաղարշայի խորհանտեսութեյան լավագույն հորթապահներից շատերը պարգևավարկեցին հորթով:

Գործավարձի կիրառումը խոշոր չափով նպաստեց բանվորների ամբացմանը տնտեսութեյան մեջ ե բանուժի հոգունութեյան վերացմանը:

11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՆՏՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշխատանքի կազմակերպման ե վարձատրման այն հիմնական սկզբունքները, վորոնց վրա կանգ առանք քիչ առաջ, հիմնականում վերաբերում են նաև կոլտնտեսութեյուններին՝ աշխատանքների ե կադրերի մասնագիտացմանը, աշխատանքների ճիշտ

դատավորմանը ԿԱՅ-ում, դիմադրելու թյան վերացմանը, տվյալ աշխատանքին յերկար ժամանակով ամրանալու, «ձախ» հալսասարեցման վերացման և իսկական գործավարձի կիրառման, աշխատանքների ճիշտ հաշվառման գործում և այլն:

Հարվածային կոլտնտեսականների յերկրորդ համագումարի կողմից ընդունված գյուղատնտեսության որինակելի կանոնադրության մեջ ասված է՝ «Յեթե անասնապահական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատույնը, անասունների ավելի գիրությունը և մատղաշների լիակատար պահպանումը, ապա արտելի վարչությունն այգալիսի բրիգադի բոլոր անդամների յեկամտի վրա հավելումներ է անում նրանց վաստակած աշխուրի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչև 15%-ի չափով, իսկ բրիգադիին և ֆերմայի վարիչին՝ մինչև 20%-ի չափով»:

Լավ աշխատանքի այսպիսի շահագրգռման հետ միասին, կանոնադրությունը սահմանում է նյութական պատասխանատվություն՝ վատ աշխատող բրիգադների և կոլտնտեսականների նկատմամբ: «Յեթե անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով տալիս է միջակից ցածր կաթնատույնություն, անասունների գիրություն և մատղաշների պահպանում, ապա արտելի վարչությունն այգալիսի բրիգադի բոլոր անդամների յեկամտեներից պահումներ է կատարում՝ նրանց վաստակած աշխուրի ամբողջ թվի մինչև 10%-ի չափով»:

Հորթապահները, կամ կթրար-հորթապահների արտադրական նորմանքը կազմելիս պետք է նկատի առնել հետևյալ գրեթե ամբողջ ցուցանիշները. ա) մատղաշների անկում չտալը. բ) որական միջին աճի ապահովումը յուրաքանչյուր հորթի համար. գ) մատղաշների առողջությունը և ամբակազմությունը, դ) անարատ կաթի ծախսման խնայումը: Վորպես որակաւ միջին աճ, տեղական ցեղի հորթերի համար կարելի յե ընդունել 400—500 գրամ, մետսիների համար՝ 500—600 գրամ:

Դործարքի կիրառման հաջողությունը կախված է նրանից, թե աճյալ կոլտնտեսությունը վորքան ճիշտ կսահմանի արտադրական նորմանքը, կատարած աշխատանքների հաշվառումը, կադրերի մասնագիտացումը: Այս ուղղությամբ նույնպես նոր կա-

նոնադրությունը տալիս է պարզորոշ ցուցմունք... «Գյուղատնտեսական աշխատանքները կատարվում են գործարքի հիման վրա»... յուրաքանչյուր աշխատանքի համար սահմանվում են այնպիսի արտադրական նորմանք, վորոնք մատչելի լինեն բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականի համար...»

Յուրաքանչյուր կոլտնտեսություն մատղաշների պահպանման և աճեցման ուղղությամբ գործարք կիրառելու ժամանակ պետք է պեկավարվի վերոհիշյալ սկզբունքներով, յեկնելով տվյալ տնտեսության կոնկրետ պայմաններից, ողտադրոծելով առաջավոր կոլտնտեսությունների դրական փորձը:

Չպետք է մոռանալ, վոր աշխատանքի ճիշտ կազմակերպումը և գործարքի կիրառումը հանդիսանում է մատղաշների պահպանման ու աճեցման վճռական պայմաններից մեկը:

7. ՀՈՐԹԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅԳԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՍ

Հորթերի հիվանդությունները կարելի յե բաժանել յերկու խմբի՝ վարակիչ հիվանդությունների և վոչ վարակիչ հիվանդությունների:

1. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին խմբին են պատկանում՝ սպիտակ փորլումը, թոքերի վարակիչ բորբոքումը, վարակիչ հոդաապր, դիֆտերիա, և այլն: Այս հիվանդություններն առաջացնողները հանդիսանում են հատուկ միկրոբները, վորոնք սովորաբար գտնվում են գոմերում, ցոմքարի մեջ, անասունների արտաթորանքի մեջ և այլն:

Այդ հիվանդություններով բռնված հորթերի մեծ տոկոսը սովորաբար սատկում է, դրա համար էլ նրանց դեմ պայքարելու ամենավնասակամ միջոցը հանդիսանում է նիվանդությունը կոմիսումը՝ պրոֆիլակսիկամ:

Թույլ չտալ, վար հորքը, մատաղսը հիվանդացնա, մանավանդ վարակիչ հիվանդություններով, անա գլխավոր միջոցը:

Սպիտակ փորլումով հորթերը հիվանդանում են ծնվելու առաջին օրերը, հիվանդության առաջացման գլխավոր պատճառն անմաքրությունն է. հորթին կերակրում են կեղտոտ ամանից,

չախտահանմամբ ձեռքերով, նախորդ չեն լվանում. կոճի կուրծք և սեռական օրգանները՝ ծնեկուց առաջ և հետո:

Հիվանդանալուց հետո բուժիչ միջոցները շատ քիչ արդյունք են տալիս:

Սպլիտակ փորլուծի դեմ կիրառվում են հետևյալ միջոցները. նախ մաքրվում է ստամոքսը՝ լուծողականի միջոցով: Լավ ներգործություն է ունենում 1—2 ճաշի գդալ գերչակի ձեթը, վորից հետո՝ 3 ժամ անց՝ տրվում է կտավհատի սերմից կամ վարսակի ձափարից պատրաստած խաշուկ (60—70 դրամ սերմ 2 բաժակ ջրի մեջ): Դրանից 3—4 ժամ հետո պետք է տալ յերիցուկի (առժաշկա) թեյ, մոտ մի թեյի բաժակ, վրան ավելացնելով 3 գդալ սղի և մեկ գդալ կաղնու կեղևի փոշի: Դրական արդյունք է առաջ թարմ մածնով կերակրելը: Բուժման ընթացքում հորթը պետք է պահել տաք մեկուսարանում և փորը փաթաթել տաք շաբով:

Հագստապր. — Նյունպես առաջանում է ծնվելու առաջին օրերը վարակի մուտք և գործում դեռ չլավացած սլորտի վերքի միջոցով: Պորտն ուռչում է, թարախակալում, ծնկային և արմնկային հազերն ուռչում են, բորբոքվում և ցավեր են առաջացնում, հորթը սկսում է լուծել, հազալ, ջերմաստիճանը բարձրանում է, կորցնում է ախորժակը, թուլանում, ուժատապառ է դառնում և առաջում է: Այս դեպքում ել պայքարի հիմնական միջոցը պրոֆիլակտիկան է: Բուժման միջոցն այն է, վոր ամրապնդվեն հորթի ուժերը. դրա համար նրան պետք է տալ մաքուր կաթ (լավ է դալ). ոգտակաք է կաթի մեջ ավելացնել նաև 2—3 հառձու և 2—3 գդալ գինի:

Թափախ վարակիչ բորբոքումը. — հաճախ միանում է վարակիչ հոգստապրին և սպլիտակ փորլուծին և ծանրացնում է հորթի վիճակը: Այս հիվանդությունով հորթերը հիվանդանում են վոչ միայն ծնվելու առաջին օրերը, այլև 25—30 օր անց, նույնիսկ 6 ամսական հասակում, յերբ նրանք պահվում են հակառակդարձական պայմաններում և չեն պաշտպանվում ցրաից, քամիներից: Թափախ բորբոքումով հիվանդացած հորթերը հետևյալ նշաններն են ցույց տալիս. շնչում են արագ-արագ, բոլորովին կորցնում են ախորժակը, մի քանի օրից հետո առաջ է գալիս գարշահոտ փորլուծ, և հորթը սատկում է:

Պատահում է, վոր հիվանդությունը յերկարում է. այդպիսի դեպքերում հորթերը յերբեմն բուժվում են: Բուժման դերը, ինչպես և հոգացավի ժամանակ, կայանում է որդանիզմի ուժեղացման մեջ. դրա համար ել պետք է ամբողջ ուշադրությունը դարձնել հորթի խնամքին, կերակրմանը: Ոգտավետ է ախտահանիչ նյութերի (կրիոլին, ձյութ, սկիպտար) գոլորշու շնչելը:

III. ՎՈՋ ՎԱՐԱԿԻՋ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հիվանդություններով ամենից առաջ բռնվում են մարսողական և շնչառության օրգանները, վորի պատճառը հանդիսանում է վատ խնամքը և անկանոն կերակրումը:

Սովորական փորլուծ. — առաջ է գալիս հին, բորբոքած կերեր տալուց, թթված կամ կեղտոտված կաթ խմեցնելուց, սառը ջուր խմեցնելուց, նորմալից շատ ավելի կաթ խմեցնելուց շրջապատի կեղտոտ պատերը կամ այլ իրեր լիզելուց և այլն: Հիվանդությունն յերևալու դեպքում պետք է իսկույն ստուգել և վերացնել վերոհիշյալ պատճառները: Ինչ վերաբերում է բուժման միջոցներին, դա նույնն է, ինչ վոր սպլիտակ փորլուծի բուժման ժամանակ: Նախորդ լուծողականի միջոցով մաքրելով ստամոքսը, պետք է նույն հերթականությամբ, ինչպես սպլիտակ փորլուծը բժշկելիս, գործադրել դեղերը:

Մեր փորձի հիման վրա կարելի յե վստահորեն ասել, վոր միանգամայն դրական արդյունք է տալիս դալով բուժումը. վոր կատարվում է այսպես. հիվանդ հորթի ստամոքսը լուծողական տաք լուծիկով հետո հորթը գցում են նորածին կոճի տակ նով մաքրելուց հետո հորթը գցում են նորածին կոճի տակ ձեռքով՝ նախորդ մաքուր լվանալով կոճի կուրծք. թարմ, անածեղ, հառձու կաթով լվանալով կոճի կուրծքը, և հորթը փոխադրվում մոքսի նորմալ գործողությունը, վորից հետո հորթը փոխադրվում է նորմալովրված կերակրմանը: Առողջանալուց հետո 4—5 օր դեռ պետք է շատ զգուշությամբ հետևել հորթի կերակրմանն ու խնամքին, վորպեսզի փորլուծը չկրկնվի, կրկնվելու դեպքում, բուժումը դժվարանում է*):

*) Հաճախ հասարակ փորլուծն առաջանում է և նրանից, վոր հորթերը կաթ խմելիս միանգամից շատ կաթ են կուր տալիս և այդ կաթն ստամոքսում մաքրվում, կարծրանում է, կաղմելով դժվարամարտ դուռնդ՝ հավի ձվի չափից:

Շնչառութեան հիմնադրութիւններ. — Հաճախ նկատուած ենք, վոր հորթն սկսում է հազար, արագ կամ ծանր շնչել։ Այդ ժամանակ հորթն սկսում է կորցնել ախորժակը և թուլանում է։ Շրն-
չառութեան այդպիսի խանգարումն առաջ ե գալիս գլխավորապէս միջանցիկ քաւիներէից և կարկտի կամ անձրևի տակ թրջվելուց։
Վորովհետև շատ հաճախ շնչառութեան խանգարմանը միանում է ստորակաւն փորլուծը, դրա հետեանքով հիվանդները սատկման տոկոսը բավական բարձր է լինում։ Ավելորդ չի լինի այստեղ հիշել, վոր Հայաստանի խորհրտեսութեան յուններում 34—35 թ. ընթացքում սատկած հորթները հիվանդացել են գրեթէ բացառա-
պէս վոչ վարակիչ փորլուծով և վոչ ել թոքերի վարակիչ բորբո-
քումով։

Բուժման միջոցներից կարելի չէ խորհուրդ տալ սկիպիդարի և սոգայի գոլորշու շնչել տալը։ Ծանր շնչելու դեպքում կրծքին պետք է դնել մանանեխի ծեփելիք (գարշիչնիկ)։

Խորխը մաքրելու, կոկորդի (ավելի ճիշտ՝ շնչափողի) և կրծքի ցավերը հանգստացնելու համար հանձնարարվում է տալ 15—20 գրամ անիսի, սամիտի սերմերից, լորու կամ չամբուկի ծաղիկնե-
րից պատրաստած ոշարակներ կամ խաշուկներ, վորոնց վրա պետք է ավելացնել 2—3 թեյի գդալ սոդա։ Բժշկութեան ընթացքում մեծ դեր է խաղում խնամքը։ Հորթը պետք է գտնվի չոր, մա-
քուր, լուսավոր, տաք հորթանոցում, ուր անպայման պետք է լինի ողափոխութիւն, վոր հորթը շնչի մաքուր ու թարմ օդ։

Ռեկվիզիտ. — Այդ հիվանդութեան առաջնալու պատճառը խոնավութիւնն ու մրսելն է, վորի հետեանքով առաջանում են հոգերի բորբոքում, ուռուցք և ցավեր։

Բուժման գլխավոր նախապայմանը հիվանդին չոր և տաք հորթանոց փոխադրելն է, այնուհետև ուռած հոգերը շփում են սկիպիդարով, սպիրտով և փաթաթում տաք շորով։

Ռեկվիզիտից յերեւման շփումն են ուսիրտ (փափկակրու-
թիւն) հիվանդութեան հետ, բայց նրանց նշանները տարբեր են։

մինչև նորածին յերեւալի զխի չափ։ Այդ դուռը գրգռում է ստամոքսը և առաջ բերում աղիքների արագ շարժում, վորի հետեանքով առաջանում է փսրում, վորը հաճախ վերջանում է մահով։ Դրա առաջն առնելու համար հարկավոր է յեփած ու գոլցած ջուր խմեցնել հորթին՝ կաթ տալուց հետո

Սք. խմբ.

ուսիրտի ժամանակ վոսկորները ծուլւմ, ձեւփոխվում են, բայց ցավերը համեմատաբար թույլ են լինում քան ռեկվիզիտի ժամանակ։

III. Մ Ի Ջ Ա Տ Ն Ե Ր

Բռն. — Ամառն արոտի ժամանակ բոսերը ձվիկներ են ածում հորթերի կաշվի վրա, վորից դուրս են գալիս թրթուր-
ներ։ լիզելու ժամանակ այդ թրթուրներն անցնում են բերանը, այնտեղից՝ վորկորը և ապա ծակում են վորկորի պատը, բարձրա-
նում են մինչև վորնուղեղային խողովակը, վերջն անցնում են կաշվի տակ և այնտեղ պահւում։ Դարնանը, հորթերին արոտ դուրս բերելիս, նրանք այնքան են աճում, վոր հորթերի մեջքին առաջանում են կաղնի մեծութեամբ ուռուցքներ, և քոր ու ցավ են պատճառում հորթերին ու փչացնում են կաշին։

Բռներին սեղմելու միջոցով դուրս են բերում կաշվի միջից այն ժամանակ, յեր նրանք բավականաչափ զարգացած են լինում, և սպանում։ Իսկ պալքարի ամենադժբախտ միջոցն է ամառ ժա-
մանակ, շոգ ժամերին հորթերին չարածեցնել, հետո պահել մի-
ջատների հարձակումից, միշտ լողացնել ջրով և կանաչ ոճառով, վոր վոնչանան կաշվի վրա գրված զանազան միջատների ձվիկ-
ները և չառաջացնեն այդ և նման հիվանդութեաններ։ Վորպեսզի բոսերն արագ կերպով դուրս հանվեն հորթերի կաշվի միջից, հոր-
թապահներին յուրաքանչյուր համած բոսի համար մեր խորհուր-
տեսութեանը վճարում է 4—5 կոպեկ։ Այդ փորձը հիանալի ար-
դյունք է տալիս։

Վորդոսւթյունը. — Հորթի վրա վոշիլ յերեւալն, տմենից առաջ չափազանց վատ խնամքի անվիճելի ապացույցն է, վոշիլը ծծում է հորթի արյունը. բացի այդ, նա կարող է տարածել զանազան հիվանդութեաններ։ Վոշիլը բնակվում է գլխավորապէս աւկանջ-
ների մեջ, յեղուրների արմատի արանքին, շրջապատում, պորտի վրա։ Վոշիլները հայտարարելու համար պետք է շատ ուշադրու-
թեամբ ստուգել տմեն մի հորթի։ Վոշիլներին վոնչացնելու մի-
ջոցը հանդիսանում է մարմնի մաքուր պահելը։ Ամեն որ խոզա-
նակով և քորիչով մաքրելը, ժամանակ առ ժամանակ կանաչ ոճա-
ռով լողացնելը։ Մեր փորձը ցույց տվեց, վոր ծխախոտի յեռացրած ջուրն ամենա սպանում է վոշիլներին՝ յեր քուռ են հորթի մարմնին։

Գրեթե նույնը կտրելի յե ասել զգետի մասին, վորոնք տղու-
կի պես ծծում են մատղաշի արյունը. բայց տղերը վոչնչացնել
կարելի յե ուղղակի ձեռքով պոկելու և տրորելու միջոցով: Տգե-
րին հայտարարելը և վոչնչացնելը նույնպես կարևոր խնդիր և:
Տգերը փոխանցում են անասունների պիրոպլամոզ հիվանդու-
թյունը (անասունների մալարիա):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Առաջաբան	3
1. Առողջ հորթ ստանալու նախապայմանները . . .	5
2. Ծննդարերուծյան կազմակերպումը	7
3. Հորթերի կերակրումը	16
4. Արոտը և նրա կազմակերպումը	31
5. Հորթերի խնամքը	34
6. Աշխատանքի կազմակերպումն ու գործարքը . .	39
7. Հորթերի հիվանդությունները և պայքարը նը- րանց դեմ	47

Խմբագիր՝ Լ. Զեմեցույան, Տեխ. խմբագիր՝ Լ. Մուրադյան
Լեզվ. խմբագիր՝ Արթ. Գրիգորյան, Սրբագրիչ՝ Գրա. Հակոբյան, Գլխավոր լրագր-
թ.—429, հրատ. 264, պատվեր № 557, տիրած 3000: Հանձնված և արտադրության
1935 թ. սեպտեմբերի 10-ին, ստորագրված և տպելու 1935 թ. հոկտեմբերի 20-ին

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան

 NL0927840

ԳԻՆԸ 70 Կ.

1935

11

27974



БИБЛИОТЕКА КОЛХОЗНИКА И СОВХОЗНОГО РАБОТНИКА

С. КАРАПЕТЯН

КАК НАДО ВЫРАЩИВАТЬ ТЕЛЯТ

СЕЛЬХОЗГИЗ — ЭРИВАНЬ 1935